

3684



06 JUN 2013

778.5

Հ-25

25 OCT 2010

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑՔ.

## ՀԱՅԿԻՆՈՅԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

### I. ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՆԿԱՐՆԵՐ

Ա. «ՆԱՄՈՒԱՄ»—7 մասից. ըստ Շիրվանգաղելիի  
համանուն փեղի.

Սցենարիան՝ Հ. Բեկ-Նազարյանի.

Ռեժիսուր՝ Հ. Բեկ-Նազարյանի.

Ռաֆերատոր՝ Զաքովլյանի.

Գլխավոր դերերում.—Հ. Աբելյան, Մայսուրյան, Համիկ,  
Շահուրատյան, Հ. Ներսիսյան, Սամվել,  
Ն. Մանուչարյան, Հ. Խաչանյան և Ա. Ավետիսյան:

Բ. «ՋԱՐԵ»—Քրդական կյանքից, 7 մասից,  
ըստ Լազոյի.

Սցենարիան՝ Հ. Բեկ-Նազարյանի.

Ռեժիսուր՝ Հ. Բեկ-Նազարյանի.

Ռաֆերատոր՝ Ա. Յալովիլի:

Գլխավոր դերերում.—Թադէվոսյան-Տենազի, Հ. Ներսիսյան,  
Գարագաջ, Ա. Գուլազյան, Հ. Խաչանյան,  
Ն. Մանուչարյան, Մ. Մանվելյան, և ուրիշներ:

Գ. «ՇՈՐ ՅԵՎ ՇՈՐՇՈՌ»—Կոմիքական, 6 մասից,  
ըստ Փալանդուգ Մկոյի.

Սցենարիան՝ Հ. Բեկ-Նազարյանի, Յալովիլի և Ա.  
Մադարյանի.

Ռեժիսուր՝ Հ. Բեկ-Նազարյանի.

Ռաֆերատոր՝ Ա. Յալովիլի:

Գլխավոր դերերում.—Հ. Խաչանյան, Ա. Ամիրիբեկյան,  
Ա. Հարությունյան, Տ. Շամիրխանյան, Ա.  
Ավետիսյան, Բ. Մուրադյան, Գ. Ավետյան, Ն.  
Մանուչարյան, Ադրելլա և ուրիշներ:

## ՀԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

ՀԱՐԳԱՑՄԱՆ  
ՅՈՒՂԻՆԵՐԸ

ՀՐԱՑԱԿԱՆ ԽՈՐՎԱԴՐՈՒԹՅՈՒՆ «ՀԱՅԿԻՆՈՅԻ»

ՅԵՐԵՎԱՆ

1927

## ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Էսթհրդային կինեմատոգրաֆիայի հոկարտկան հաստա-  
ջադիմությունը և խոչոր գերը պրոլետարական իդեոլոգիայի  
դարբնման ասպարեզում, ավելի քան կարեոր են դարձնում  
աշխատավորական լայն մասնաների ակտով մասնակցությու-  
նը կուրտուրական հեղափոխության այս դժվարին գործում:

Հայաստանի բանվորության, պլուտոսարական ինտելի-  
գենցիայի և առաջավոր գյուղացիության վոչ բավարար տեղ-  
յակությունը կինո-արդյունաբերության անխնիկայի և խրն-  
դիրների մասին, միանդամայն հասունացրել են պոպուլյար  
կինո-գրականության հրատարակության անհրաժեշտու-  
թյունը:

Հայկինոյի վարչությունը ընդառաջներով այս հրամայո-  
դական պահանջին, ձեռնամուխ և լինում բրոցյուրային կինո-  
գրականության հրատարակության գործին:

Խմբագրական կոլեգիան իր ժողովածուներում շնորհա-  
կալությամբ տեղ կատ բոլոր այն հոգվածներին, վարոնը  
կմերարերվեն կինո-արդյունաբերության հարցերի տարրեր  
ասպարեզներին:

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԿԱՆ ԱՐԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ  
ՊԱՏՎԵՐ 2243.  
ԳՐԱՓ. 78 Բ., ՏԵՐԱՌ 2000.



24494-60

Q



ԱՐՈ ԲԵԿ-ՆԱԶԱՐՅԱՆ

## ԴԺՎԱՐԻՆ ՈՒՂԻՌՎ

Եախկին Յերեանյան գալառը և «Գաչնակցական անկախ Հայաստանը» զբաղված լինելով կեզեքումով, թալանով և աղդամիջան կոխվներով, վոչ մի «հնարավորություն և ժամանակ չեն ունեցել» կինո-արդյունաբերության հարցերով զբաղվելու։ Մասնավոր անձանց ձեռքին յեզել են կինո-թատրոնները Յերեանում և Լենինականում, վորոնց միակ նպատակն է յեզել մասսաների հարստահարսումը—անբովանդակ, միտիկ, բուրժուական «հոդերանական» նկարների ցուցալրումը։ Հայաստանի խորհրդայնացման առաջին իսկ որերից, Քաղլուսպլիմարը քաջ գիտակցելով դասակարգային գառտիարակության հզորագույն զենքերից մեկի—կինոյի հսկայական նշանակությունը, ձեռնամուխ և յեզել Հայաստանի գավառների կինոֆիլմագիրի գործին։ Սակայն մասնավոր կինոները չարունակում եյին մնալ և այս ասպարեզում պետական կազմակերպված գործը բացակայում եր։ 1923 թվի վերջերից Քաղլուսպլիմարը ձեռնարկում և Պետկինոյի կաղմակերպման, վորը աստիճանաբար վեր և ածվում ակցիոներական ընկերության և 1924 թվի առլիլին հաստակվում և Տնտեսորչի կողմից «Գետլուսկինո Ակցիոներական Առևտրարդյունաբերական Բնկերություն» անվան տակ։ Այդ որպանից ել սկսվում ե Հայկինոյի գործունեցությունը։ Մինչե առ ին թվի գեկտեմբեր ամիսը Բնկերության վրամագլուխը յեզել և ընդամենը 2.400 ռուբլի։ Պարզ է, վոր այդպիսի միջնորդով չեր կարելի ձեռնամուխ անզամ լինել կինո-արդյունաբերության գործին։ Վարչությունը բավականացել է նրանով, վոր կինո-թատրոններ և բացել դաշտային կինո-

բանելում—(Եջմիածին, Ղարաքիլիսա, Դիլիջան և Ստեփանավան) և բացել ե մի կիսո Յերեանում («Պետկինո»): Վորովհէտեւ գավառային կիսնները գեֆիցիտային են յեղեւ, Հայկինոն մասհոգված լինելով կիսո-արգյունարերության համար համապատասխան Փինանսական բազայի ստեղծումով՝ հարցել և մնապոլիայի հարցը և կոնկրետ կերպով դրեւ Հայրասահնում գոյություն անեցող կիսո-թատրոնները Հայկինոյին հանձնելու ինպիրը, վորով խոստ վերացվում էր նաև այն անպատճակ մրցումը, վոր գոյություն աներ Հայկինոյի, ՀԱՄԽ-ի և Քաղրածնի միջն, վորի հետեամերով կիսններից յուրաքանչյուրը վնաս եր տալիս: Մեծ դժվարությամբ հաջողվեց Հայկինոյին իր նպաստակին հանել, վորով Քաղրածնի կիսոն փակվեց, ՀԱՄԽ-ինը անցավ Հայկինոյին և միաժամանակ կառուցվեց մի նոր կիսո-թատրոն («Նախի»), վորի վրա ծախովից մոտ 35.000 սուրի: Այս «բագականությունը» Հայկինոյին բավական թանգ նստեց: Ես պարտավորվեց վճարել ՀԱՄԽ-ին 7.000 սուրի: Իսկ Քաղրածնին 4.800 սուրի, այլ և յուրաքանչյուր շարաթ տայձրի սեանսներ կարմիր բանակայինների համար քաղաքում և Քանաքեռում:

Այս բոլորը նորից հետաձգեց Հայկինոյի գլխավոր նրապատակի իրազործումը՝ կիսո-արգյունարերության ստեղծումը: Յեվ միայն այն ժամանակ, յերբ ակցիոններական կազիտալը հասցրվեց 48.000 սուրլու, և հաջողվեց ստանալ 25.000 սուրի կարծառեւ փախառություն, հնարավորություն յեղավ մտածել սեփական արտագրություն ունենալու մասին: Բայց՝ քանի վոր մեղանում բացակայում ելին վարել հնարավորություն՝ կիսո-գործարան, մեքենայացում, վարակալորդաւ կաղը և այլն, Հայկինոն իր անդրանիկ արտագրությունը՝ «Նամուս»-ը լուսանկարել և վրաստան-

Պետկինարդի բարեհաջած սժանկակությամբ: Թէ վոր ասաինի հաջողություն և գտել «Նամուս»-ը, դրա ապացույց կարելի յե համարել այն տասնյակ բեցենդիաները, վորոնցով վողողվել ե ամբողջ ԽՍՀ Մ-ի մամուլը, ուր «Նամուս»-ը ճանաչվել ե «սեղոնի լավագույն» նկար: Նյութապես «Նամուս» տվել և արգեն մոտ 300% չափ, մի հանգամանք, վոր չափ քիչ նկարներին և վիճակվում:

Դեռ ևս մինչև «Նամուս»-ի արտադրելը Հայկինոն իր միջոցներով բաց և թողել մի շարք արտադրական և տեսարանային լուսույթ կրող նկարներ, վորոնի լավագույն վկաներն են մեր անտեսական և կուլտուրական վերելքի: Դրանց թվին են պատկանում՝ «Խորհրդային Հայրասահն», «Ընկ. Ռիկովը Հայրասահնում», «Ընկ. Մյասնիկյանի թաղումը», «Հեղեղը Յերեանում», «Յորենի կուլտուրան», «Շիրջրանցքի բացումը», «Յերեանի Հիգրոկայանի բացումը», «Գաղթականների ակղավորումը Դավարվում», «Լենինականի յերկրաշարժը» և այլն:

«Նամուս»-ի հաջողությունից հետո Հայկինոն նորից հարց է հարցել համապատասխան մարմինների ստաջ իր ակցիոններական կազիտալը ավելացնելու և Յերեանում կիսո-գործարան կառուցելու անհրաժեշտթյան մասին: Յ-4 սմիս տեսզ յերկար հետազոտություններից ու կըսակատություններից հետո ժողկամխորհի վորոշմամբ Հայկինոյի պահանջած 300.000 սուրլու զիմաց վորոշվեց հիմնադրամը ավելացնել միայն 87.000 սուրը, վորից վաստորեն ստացվեց միայն 36.000 սուրի: Այսպիս վոր ներկայումս Հայկինոյի ակցիոններական կազիտալը հանում և բնագանը 84.400 սուրլու: Եյտթական այս սեսառերներով Հայկինոյին հաջողվել և արտադրել սեփական ուժերով իր իսկ կառուցած նոր գործարանում շնորհ այս «Զարե» (քրդական կյանքից) և «Շոր և Շորչոր» (աշարակցիների մոտիվապաշտությու-

նից)։ Առաջին նկարի ունեցած հոկայտկան հաջողությունը տալիս է մեզ իրավունք կարծելու, վոր Հայկինոն կանգնած է ամուռ հիմքերի վրա, կինո-արդյունաբերությունը մեր յԵրկրի սոցիալիստական կուտակման և իդեոլոգիական պայքարի խոշոր զենքերից մեկը գարձնելու ճանապարհի վրա։

Վոր գա իրոք արդպես եւ, վկայում է Հայկինոյի 1925/26 թվի հաշվեկշխուը, ըստ վորի 84.000 սուբի հիմնադրում, 6.565 սուբ. շրջանառու կապիալ և ընդամենը 30.000 սուբ. կարծատի վարկ սահենալով կոմունալ բանկում, Հայկինոյի բարանսի ակտիվը հասնում է 380.760 սուբ. 87 կոտ., վոր բայ հոգվածների բաժանվում է՝

1.	Տեխնիքական սարքավորում և մեքենաներ 16.013 ս.	93 կ.
2.	Կենդանի և անշունչ ինվենտար . . . . .	26.777 ս. 46 կ.
3.	Շենքեր . . . . .	4.639 ս. 30 կ.
4.	Հիմնական նարոգավումներ . . . . .	57.324 ս. 41 կ.
5.	Կինո-ժամանակակի սպառասարք գործականեր . . . . .	102.342 ս. 17 կ.
6.	Երութական արժեքներ . . . . .	17.913 ս. 65 կ.
7.	Անափարտ արտադրություն . . . . .	25.300 ս. 60 կ.
8.	Այլ հոգվածներով . . . . .	130.449 ս. 35 կ.

Ընդամենը՝ 380.760 ս. 87 կ.

Կինո-արդյունաբերության ստեղծման հետ միասին, Հայկինոն մասհոգիւել է նաև կինոֆիլացիայի հարցերով։ 1925/26 տարվա ընթացքում Հայկինոյի կինոների ցանցը սննդել է հետեւյալ սրատկերը։

1. Առետրական տիսլի կինոներ—3 համ (Յերեանում, Լենինականում)։
2. Կիստանետրական տիսլի կինոներ—6 համ (Գարտքիրիս, Վաղարշապատ, Եսր-Բայսույշ, Ստեփանավան, Դիլիջան և Գամարդու)։

3. Երջիկ կինոներ—5 համ (Հետեւյալ գավառներում՝ Յերեանի, Լենինականի, Լոռի-Փամբակի, Մեղրիի և Զանգեզուրի)։

Բացի այդ, Հայկինոն նկարներ և մատակարարել բանակառներին՝ Գարալաղյաղ, Գորիս, Ղափան, Ալլահվերդի, Լենինական, Յերեան, Յերկաթդիթ և այլն։

Այս բարորի վրա պետք է ավելացնել նաև Հայկինոյի դորձուներությունը ՀՍԽՀ-ի սահմաններից գուրս։

Բացի ներկայացուցչություններից Մոսկվայում և Լենինի դրագում, Հայկինոն սննդել է 2 բաժանմունք՝ Անդրկովկասյան (Թիֆլիսում) և Պարսկաստանում։

Անդրկովկասյան բաժանմունքը գլխավորակես զրադվում և Հայկինոյի սեփականություն կազմող նկարների վարձակարությունը և հետազնում է զուտ առետրական նորատակներ։

Ինչ վերաբերում է Պարսկաստանին, այսակ խոշոր գժվարությունները հաղթանակելով, Հայկինոն բացել է կինո-թատրոններ՝ Թեհրան, Թալլիրի, Մեշտ, Ենղելի, Ղաղմին; Համազան և Սպահան քաղաքներում, ուր ցուցադրում են մեծ մասմբ Հայկինոյի նկարները։

Նախ քանի հետազա հնարավորություններին անցնելը, ոնհրաժեշտ ենք համարում մի քանի խոսքավ կանգ առնել այն գժվարությունների վրա, վորոնք կանգնած են յեղել Հայկինոյի առաջ և մասմբ շարունակում են մնալ գործունեյության սացինալ ծագալման արգելատիթ հանդամանքներ։

Այլպ խոչընդուները հանգում են նախ և առաջ նյութական գժվարությունների։

Կինո-արդյունաբերությունը հասածաղիմում և հնկայական քայլերով և այլ կատարվում է բացառապես ի հաջիք ու Երինիկայի կատարելագործման։ Իսկ այս վերջինս պահանձն

յում և զրամական խոշոր միջոցներ : Մինչ ամերիկյան կինո-առագյունաբերությունը զրազեցնում է միլիարդներ, Հայկի-նոյի հիմնադրամը հասնում է միայն 84.400 ոռոքու : Առաջին ոժանդակությունը պիտի հասցնվի Հայկինոյին պետության կողմից՝ ամելացնելու հիմնադրամը գոնե մինչեւ 300.000 ոռոքու : Սրա հետ միանին պիտի հիշատակել նաև շրջանառության կապիտալի վերին աստիճանի շնչին շափերը : 380.000 ոռոքու ակտիվ ունենալով, պարզ է, վոր Հայկինոն չի կարող բավարարվել լոկ 6.565 ոռոք . շրջանառության կապիտալով : Անհրաժեշտ է ամելացնել շրջանառության միջոցները և վարկավորումը՝ համապատասխան չափով :

Նյութական ոժանդակության հարցում խոշոր ունելիք ունի նաև մեր հասարակայնությունը :

Մեր խոսքը վերաբերում է «Խորհրդային կինոյի բարեկամների բնկերությանը», վորի կազմակերպումը և զորձաւելյության հաջողությունն ամրագովին կախված է աշխատավորական մասսաների գիտակցությունից և յեսանդից, վորը նրանք պետք է ցուցահանեն կինոյի մասսայականացման խնդրում :

Եյութական այս խոշնդուաները վաս կարօղով են սնողագառնում նաև մեր կինո-արդյունաբերության աեմսիկայի վրա : Քիչ թե չափ տանելի, մինիմալ տեխնիկա չունի Հայկինոն . լարարատորիայի հարմարություններ, ապօռաբառուրա, լուսավրություն (վոր բացակայում է բառի բայն իմաստավ) — այս բոլորը կարիք ունի կատարելագործման և արդ հնարավոր և սիրյուլյական համապատասխան ռեսուրսներ ունենալու գեղքում :

Խոշնդուաների թվին պետք է զանել նաև կինո-աշխատավորների կազմի և սցենարիստների բացակայությունը : Հայկինոն ստիլիզած է արտադրական աշխատանքների հետ միա-

սին զբաղվել նաև վարակագործական կինո-աշխատավորների պատրաստման գործով, մի հանգամմանք, վոր բացասական ազգեցրություն և թողնում մեր արտադրազականության վրա : Բացի այս ձեռավ տարվաղ աշխատանքներից, Հայկինոն մտահոգված է նաև կինո-ստագիտայի բացման, Մոսկվա և այլ քաղաքներ յերիտասարդ ուժերի գործուզման հարցերով, վորոնիք անշուշտ մի ասրվա խնդիր չեն և վորոնիք սակայն, ձիւտ ձանապարհ են կինո առաջարկեղում կարմիր կինո-մասնագետներ պատրաստելու ահապետից :

Ինչ վերաբերում է կինո-սցենարիստների սովորն, վոր զգացվում է մեզանինում, սա պիտի բացարձիկ բնորդանբարեն ժամանակակից գրականության աղքատությամբ և կինո-սցենարիստների տեխնիկային անտեղյակությունու : Այս առաջարեցում Հայկինոն մեծ ակնկարություններ ունի մեր յերիտասարդ գրողներից և այն կարծիքի յեւ, վոր սցենարիստների խմբակի կազմակերպումը Հայկինոյին կից պետք է այսորված չափ գարձնել :

Յեվ այսպիս զեօ կարելի յեր շարունակել մեր աշխատանքների առաջարեցում գոյություն ունեցող խոշնդուաների թվարկությունը, սակայն բավականանք զլիսավորներով և անցնենք մտադրա զարգացման հեռանկարներին :

Հայաստանը կինո-արդյունաբերական զարգացման համար ունի մի չափ որբեկալ տվյալներ : Դրանց թվին և պատկանում նուի և սուած մեր յերկրի առատ արել, վոր հնարավորություն և տալիս ասրվա 9—10 ամիսը բացողյանկարումներ կատարել : Ապա պիտի հիշատակել հարուստ և բազմապիսի բնությունը, այսաեղ կարելի յեւ հանդիպել բոլոր կլիմաններին՝ սկսած ձյանապատ լեռներից և կանաչավան սարալանջերից մինչև ծաղկավիթիթ հսկիոններն ու ամայի անտապատները : Վերջապես նպաստավոր պայմանների շարքում պիտի հիշատակել նաև ազգարնակության բարդու-

ողիսությունն իր ուրույն կենցաղով և սովորությաւններով :

Կանդնած լինելով գարավոր նիրհից զարթնող Արևելքի չեմքին, Հայկինոն կոչում ունի այդ զարթոնքի ահազանդր հնչեցնելու և Արևելքի շահագործվող ժողովուրգների հեղափոխական-ազատագրական շարժումներն հրահրելու : Իր այս մերին աստիճանի կարեսը և բարձր նպատակն իրազրծելու համար, Հայկինոն սկսել և շատ փոքրից, ծավարում և իր գործունելությունը մեծ գժվարություններ հաղթանակելով՝ առկայն, առուր կանգնած է ճիշտ ձանապարհի վրա :

Ունենալով շատ փոքր արտադրանք, Հայկինոն արդեն ստեղծել է իր բարձր «մարիկան» և այս սեղոնում, ինչպես այդ ժաման, վկայում է ԽՍՀՄ-ի բովանդակ մամուլի՝ առաջնակարգ տեղ և բանել մյուս արդյունաբերական ձեռնարկությունների շարքում :

Մեր բոնած ուղին մեր անցյալի սոցիալական սլայքարի (գրական վերամշակումներ) և ներկայիս սոցիալիզմի կառուցման ձանապարհն է :

Պետական հասարակական որդանների և լայն աշխատավորական մասսաների յեսանդուն ոժանդակության և մասնակցության միջոցով, Հայկինոն իրոք վոր կը կարողանա կիրան սոցիալիզմի կառուցման գործում այնքան անհրաժեշտ կուլտուրական հեղափոխության հղորագույն գենքերից մեր գարձնել :

Համեստ ձեռվ ոկսել և Հայկինոն իր գործունելությունը, խոչըր գժվարություններ և հաղթանակել, շատերը զեռ նրա առաջն են, սակայն նրա նպատակները բարձր են և անհրաժեշտությունը անկատկած :

«Գեղարվեստի բոլոր ձեւերի մեջ ամենաանհրաժեշտը մեզ համար կինոն և»—առել ե ընկ. Լենինը : Մեծ ուսուցչի այս մեծ պատգամի տակ՝ առաջ դեպի կինոյի բարգավաճումն ու մասսայականացումը :

## ԿԻՆՈ—ԲԵՎԵՐ

I

Յեթե տարրական համեստությունը մեզ հարկադրում է ձեռնպահ մնալ ամերիկյան կինո-արգյունաբերությունը մերին հետ, նրա ներկա դրությամբ ուղղակի համեմատելուց, ապա վոյքնչ չի կարող մեզ արգելք հանդիսանալ համարձակ ու համոզված կերպով, առանց քաշվելու և համեմատություն անելու խոսել նրա մոտագա հեռանկարների մասին :

Իհարկե, ամերիկյան կինո-քեռու թափի առաջ այս աշխարհում զոյսություն ունեցող բոլոր յերկրների կինո-վորձերը կը նսեմահան :

Իհարկե, բոլոր յերկրները միասին գժվար թե ի վիճակի լինեն կինո-արգյունաբերությանը Յ միիարդ և հատկաց նելու, ինչպես այդ արեց Ամերիկան, և գժվար թե այժմ ու ամեն որ մենք չենք յերազում հարյուր անդամ ավելի պակաս դռւմարի մասին . . .

Պակայն եյտկանն այս չե :

Մենք արգեն ականատես ենք յեզել մեծ վլուգումների . . . միապետությունների, գենովկատական հանրապետությունների, բանկային թագավորների, մեւ ամբողջ շարք Ասիներների և կինո-ամերերի սնանկացման : ԶԵ՞ վոր Յեվրոպայի և նրա կողմից զաղութացված արտայիւրողական յերկրների կինո-հեգեմոն Փրանսիական «Pathé frères» Փիբման, վորը գեռնեա 1914 թվին որական 150 հազար մետր թեթևութիւն ու սահմանինոտայ մակուլտատուրա յեր արտադրում, առ

վա՛զ, իր համբավը կորցրեց վերջերս միայն, վերդէնի հերոսական անկման որերին:

Գալլիական աքաղաղի ծիծաղելի մարկան նուժացամք, իր համբավը կորցրեց չ աքաղաղը վետրահան յեղագ, ինքը թրուանիան իր եկրանի վրա 80 տոկոսով ներժուծված Փիլտաներ և դիտում: Չե՞ վոր ամեն տեղ քիթր խօթող, սովորական ու բանայլ, սիրո խառնելու շափ միորինակ ու տագտուկ, Յեվրոպայի եկրանի այսորվա տեր ու տնորեն Գարբի Պիլը և իր արբանյակներն այնքան սքանչելի կերպով ներգաշնակում են այսորվա Փարիզի մտքերի վրա իշխող, խոսքի բուրվարաւին վարպետ և յերկու սանտիմանոց թերթերի հոյտկապ Փելյոտոնիստ Պիլը Բենուային:

Ֆոկստրուով տարված Յեվրոպան զիտում և Գարբի Պիլը և ընդմիջումների ժամանակ հարյուրերորդ անգամ կարդում Անգլիային ատող Փրանսիական վաստահեղ պատրիստի չուշանագույն յերկների, չուշանագույն մատախուզի, չուշանագույն կրթի և չուշանագույն ցոփության մասին: Եռոյնիսկ Ֆերբենկուր չե փրկի տմերիլյան Փիլմի անիդեականությունը, և այդ Փիլմը կմեռնի շատ ավելի առաջ, քան կմեռնի եկրանի համար «չքնաղեղ Մերին», քան կնսեմանա Գրիֆֆիտի, Լյուբիչի և եկրանի ու տեղելեի այլ տառղերի ու համաստեղությունների տապանդը:

Դերմանիան առաջինը փորձեց առանց ներժուծելի Փիլը կառավարվել և բանից գուրս յեկագ, վոր յերկիրը պատշաճ կերպով կիմոֆիացիայի յենթարկելու զելքում հնարաժոր և արտազրությունը հիմնել սեփական չուկայի վրա: Յեկ հենց այս հողի վրա յե, վոր տոտջացան Ուփա, Գելլաբիոսկոպ և այլ հոկաները:

Մի շարք, և առաջին հերթին տնտեսական կարգի նկատմառներ մեզ (ԽԱՀՄ) հարկադրեցին նույնույն հրաժար-

վել Փիլմեր ներժուծելուց, կամ համենայն զեպս այդ ներժուծումը հասցնել աննշան մինիմումի:

Մեր եկրանն անկասկած մի քիչ կը սովորածանա, չին նկար-ներով մեր «զահյան կտանի», սակայն ամեն կտակածից դուրս ե, վոր նա կվերականզնի, կվերածնզի, զեն չարտելով իր ստարերկրյա, այլանդակության չափ գոեհիկ արւարձա սեփական խորհրդային արտազրության հաշվին:

Ամենակարեսը արվեստը, հնարագոր և, վոր մեզ համար ևս յեկամտի հրաշալի ազբյուր կդառնա:

Այս կլինի, և կլինի վոչ այնքան ուշ:

||.

Խղձուկ գրոշներով սկսեց իր գործը Հայկինոն: Հարկա-գոր եր արդյոք սկսել այդ գործը, հարկագոր եր արդյոք կարսոնե սրով պայքարի գուրս զալ «Ունիվերսալ Սիոնի»: «Սատակեն» և այլ բաստիոնների դեմ...

Սակայն չե՞ վոր Արեմուտքի գեմ մեր կողմից մզվող կի-նո-պայքարի ամբողջ պատմությունը վոչ այլ ինչ և, յեթե վոչ համար պարտիզանական կոփ, հարձակումներ, պար-սություններ և հաղթանակներ:

Ֆե Բենեսը գլուխ խոնարհեց «Պատյումկին Զրահանոսի» առաջ և վորոշեց մեզնից բան սովորել:

Իր «Բազգաղի զողի» և «Խորին Գուղի» վրա միլիոններ ծախսած այդ վարպետը յեկել և բան սովորելու նսանցից, վորոնք չեն համարձակվում մի քանի տասնյակ հազարից ա-վելի ծախսել մի նկարի վրա:

Յեկ զժվար թե միլիոններ նստած շատ Փիլմեր այնպիսի զափասնիքի արժանացած լինեն, վորպիսի զովասնիքի ար-ժանացավ զրաշներ նստած «Նոմուսար»:

«Ետմուսն» սքանչելի մի Փիլմ է, վորի մեջ Արևելքը պատկերանում ե իր ներկա տեսքով :

Կյանքը, տիպերն ու կենցաղը տրված են գունեղ և առանց վորեւ ՓայլսիՓիկացիայի : «Ետմուսը» դիտերով՝ մենք աշապին բավականություն ստացանք» :

Թյուրքական գլխավոր գեսպան՝ ՍՈՒԼԵՅՑՄԱՆ ԲԵՅ  
Դեսպանության Լին քարտուղար՝ ԲԵԳԻ-ԲԵՅ

«Ի՞նչ հակայական տարբերություն կա հնի և նորի միջև : «Ետմուսը» հմայում ե իր թարմությամբ, գունեղությամբ և ճշությամբ : Լավ կլիներ այս Փիլմը ցուցադրել մեզ մոտ, ձափոնիայում» :

Ճափոնական գեսպան՝ ՏԱՅԵՎԻ  
Անձնական քարտուղար՝ ՄԻՌԿԵՎԻ

Ապառեցեք, մենք արդ բավականությունը՝ ձեզ կպատճառենք և կցուցաղբենք մեզ վոչ միայն Ճափոնիայում. առկայն հաղիվ թե մեր ճշմարտությունը, թարմությանն ու գունեղությունը միշտ ընդունելի լինի ձեզանում, ձեր ներկա բարքերի պայմաններում :

«Պատյոմկին Զրահանակի» Գերմանիայում արգելելու պատմությունը գեռ բազմեցս կը կրկնվի այլ նկարների հետրայց միթե «Պատյոմկին Զրահանակը» ճշմարիտ, թարմ ու գունեղ չեր :

«Յուժանիտեն», ամերիկյան թղթակից Միլլոր և մի շաբթ այլ ականավոր անձնավորություններ պատշաճ գնահատական են տալիս մեր նկարին և միանգամայն տեղին գովարանում այդ վոչ-սպովորական նկարի ոեժիսյոր Ա. Հ. Բեկ-Նաղարյանին : Սակայն ինքը, հարգելի ոեժիսյորը, իհարկե, չափ և դիտակցում, վոր իր հաջողությունը նուպարտական է . . .



ԴԱՅՈՒԲԱՅՅԱՆ-ՏԱՏԻԵՎԱՆ ՍՈՒՍԱՆՆԱՅԻ-ԴԵՐՈՒՄ («ՆԱՍՈՒՄ»)

Աւու:

Ի հարկե, վոչ թե իր տրամադրության տակ գրված գրա-  
մական ուսուբաններին, առելլելին և նյութական այլ հարմա-  
րություններին, այլ լարոյական ու իդեական բնույթ կըսպ  
և հաշվառման չենթարկվող պայմանների մի ամբողջ կոմք-  
ւեքսի, պայմաններ, վորոնց չես հանդիպի վոչ խորհրդա-  
մին հողի վրա: Բայց յերկույթին մի բան կա, վոր լիովին  
փոխառուցում և ամերիկյան միլիարդները:

Այդ արժնացող մասսայի, գարերի ճնշման գեմ ուղղված  
բոզոքի հին կենցազի ավերման, նեխածության ու հնամուու-  
թյան գեմ ուղղված ընդվզումի վոգին ե...

«Նամուսի» մեջ դասակարգացին պայքար չկա, «Նա-  
մուս»-ի մեջ կարծեք թե չկան և վառ գույներով արտահայտ-  
ված սոցիալական մոմենտներ... առա այն ինչն ե, վոր նրան  
«միանդամայն նոր և որիդինալ» (Միլլս) և դարձնում:

Մի՞թե Արևմուտքը մերթ ընդ մերթ՝ իրենց իդեայով  
«Նամուսի» նման նկարներ չեն դնում, մի՞թե այնտեղ չեն բո-  
զոքում անարդարության գեմ: Այդպիսի նկարներ, իհարկե,  
լինում են: Լինում են և բոզոքներ: Բայց այդ բոզոքը խեղ-  
դված ե, անկեղծ չե, սրաի խորքից չի բղխում, կարված և  
սպիտակ թելերով...

Իսկ «Նամուսի» մեջ, վորքան ել պարզ և նրա կառուց-  
վածքը և բնմագրումը, տեսնում ես, վոր բեմադրողը զեկո-  
վարվել և մի զգացումով, նողկանք տածելով գետի հինը:

Մենք զեռ ես չենք ավարտել «Զարե» հերթական նկարը,  
սակայն մենք հաստատ պատենք, վոր քաղական կյանքից վեր-  
ցրած այս նկարը վոչնչով չպիտի նմանվի Ամերիկայի և  
Յելլուպայի այն նկարներից և վոչ մեկին, վորոնք տալիս են  
նրանց կողմից քաղաքակրթվող ժողովուրդների կյանքը:

Այս նկարի մեջ ամեն ինչ թարմ և լինելու, նոր և որիդի-  
նալ, վորովհետեւ նրա մեջ տառչին անդամն և պատկերաց-



վում քուրդ հոգիվի անպահույթ ու անազորույն կյանքը և  
նրան ճնշող բեկի, պրիստավի, նահանգապետի և արգեն ժո-  
ռացության գիրկը նետված անցյալի վողջ նվիրագետության  
ֆիզիոնոմիան:

IV.

Յերբորդ նկարին մենք գետես չենք ձեռնարկել: Սակայն  
յեթե մենք ցանկանում ենք շարունակել Հայկինոյի արտա-  
դրական գործունեյությունը, յեթե մենք ի նկատի ունենա-  
լով, վոր առաջայում խորհրդային կինո-արդյունարկու-  
թյունը պետք է սինդիկատացնենք և կինո-կապիտալները  
պետք է կենտրոնացնենք, չենք ուզում նրան թողնել անայ-  
նազործի խղճուկ գրության մեջ, ապա մենք այժմ արդեն  
պետք է հոգ տանենք նրա հետապա բարգավաճման յերկու  
կարեսը պայմանների մասին:

Ենք իրոք կամ պետք է մենք ասենք, վոր այդ բեռը մեր  
ուժերից վեր և և չարժե իզուր տեղը անայնազործությունը  
գրադիվել:

Կամ մենք պետք է միջոցներ փնտունք Հայկինոն անընդ-  
հատ արտադրության փոքրիչառե տանելի պայմաններով տ-  
պահովել:

Գի կարելի իհարկե կարծել, վոր՝ կարելի յե բեղմնու-  
վոր ու շահավետ աշխատանք կատարել, առանց անհրաժեշտ  
ապարատների, սարքավորված տանելիյելի և այլ պարտա-  
ների, ունենալով (կամ նույնիսկ չունենալով) մի քանի հա-  
զար ուռելի:

Յեվ այսպես, առաջին պայմանը—միջոցներ ունենալն և  
յերկրորդը՝ այդ գործի շուրջը հասարակական ուժերից վո-  
րոշ ակտիվ ստեղծելն և, այնպիսի ուժերից, վորոնք կինոն  
իսկապես մեծ արվեստ են համարում և նոր աշխարհի, նոր  
կենցաղի ու նոր կուլտուրայի համար մարտնչելու դենք:

Ի՞նչ նկար պիտի նկարենք մենք յերրորդ կամ չորրորդ  
հերթին:

Իհարկե, վարչությունը կարող է լուծել այս հարցը:

Սակայն ավելի ճիշտ չե՞ր լինի, յեթե այս հարցի վարու-  
թանը մասնակցեն խորհրդային հասարակության լայն շր-  
ջանները, արհմիությունները, գրականագետները, արտիստ-  
ները և այլն:

Խոսքն այն մասին չե, թե կոնկրետ կերպով ինչ թեմա,  
ինչ սյուժեն, ինչ Փարուրա վերցնել—այս յերկրորդական ու  
հասարակ հարց է:

Խոսքն այն մասին է, թե խնդիրների վորպիսի ըրջան չո-  
չափնենք, այն նկատառումով, վոր նա լինի արժեքավոր ու  
գեղարվեստական, և կոմերցիայի տեսակետից՝ շահավետ:

Կարծեք թե այն տպագրությունն և ստացվում, վոր  
առողջ և արդում «և առաջուն, և մամնային»—սակայն այս  
այսպես չե:

Վորքան ել սպատակար լինի վորեև գիտական թեմա, չենք  
կարող այժմ այն գնել, յեթե հույս չույս չունենք, վոր կարող ենք  
նրա ծախսը հանել և վորոշ կուտակում ստեղծել մեր արտա-  
դրական գործունեյությունը շարունակելու համար:

Նկարը վերցնենք հայկական կյանքից թե դրանով մեզ  
շահամանափակենք: Վերցնենք արդյոք հեղափոխական թե-  
մա, և յեթե այս, ապա ինչ ամփի՝ հերոսապատում, պատ-  
րական գյուղապներգություն, ժամանակակից սատիրա, կո-  
մեդիա թե՛ դրամ:

Վերցնել և մշակության յենթարկել «Անուշ»-ի, «Պե-  
պո»-ի նման գրական աշխատությունները թե՛ նրանք կարող  
են սպասել կամ հարկավոր չեն:

Առաջադրել արդյոք այժմյան մեր շինարարության մո-  
ւենաները թե յերիտասարդության համար վերարտագրել:

անցյալի ձնչումների և մեր գասակարգային թշնամիների  
դեմ մղված պայքարի պատկերները :

Այսպիսի բազմաթիվ հարցեր կան, վորոնց լուծումը  
մարդկանց նեղ ըրջանի գործ չէ:

Մեծ գոհունակությամբ ենք մատնանշում, վոր մեր  
թերթն անկետայի յե ձեռնարկում այնպիսի մարդկանց ըրր-  
ջանում, ովքեր մոտ են կանդնած գեղարվեստի, դրականու-  
թյան, և մեր գործունեյության կուլտուրական ու իդեոլո-  
գիական Փրոնտի հարցերին :

Հայկինոյի վարչությունն իր հերթին մտադիր և մի  
շարք զրուցյների ու ժողովների միջոցով պարզել մասսաների  
կարծիքը: Այս բոլորը միանին, մեզ թվում ե, կազահովի  
Հայկինոյի հետագա գործունեյության ճիշտ իդեոլոգիական  
բնիքացքը, և հավանաբար, թեավորելով այդ նոր կազ-  
մակերպության աշխատակիցներին, նրանց կմղի գեղի  
նոր հաղթանակներ, նոր հաջողություններ և խթան կը-  
հանդիսանա՝ նվաճելու վոչ միայն ճափոնական Աւ ամե-  
րիկական սրտերը, այլ և մեր Միության բանվորագյու-  
ղացիական մասնաների համակրանքը :

Մեր նպատակն ել հենց այս ե:

Պ. ՖՈԼՅԱՆ

## ՅԵԹԵ ԴՐԻ ԽՈՐՅՈՒԱՅԻՆ ԿԻՆՈՅԻ ԲԱՐԵ- ԿԱՄՆ ԵՍ, ԱՆՑԻՐ ԽՈՐԿԻԲԻ ՇԱՐՔԵՐԸ

ԿԻՆՈՅԻ ԿԱՂԵՐԸ ՈՒՂԻՆԵՐԸ

Ամեն որ Հայկինոն ստանում և զանազան անձերից  
առանցյակ և հարյուրավոր գիմումներ՝ իրենց կինոյում աշ-  
խատանք տալու համար: Դրանք գործազուրկների գիմում-  
ներ չեն, վորոնք ծառայություն են փնտրում: Այդ հայտա-  
րարությունները չեն կրում այն բնույթը, վորը մինում և  
գործազուրկների գիմումների մեջ. դրամը նրանց համար  
յերկրորդական տեղ է դրավում: Այդ գիմումների հեղինակ-  
ները կինո սիրողներն են, և նրանց հետաքրքրում է գործը:  
Վորպես այդպիսիք, նրանցից շատերն առողյա կյանքում  
ավելի ապահովված են, քան յեթե նրանք աշխատեն կինո-  
յում: Իրենց գիմումների մեջ բոլորը մատնանշում են իրենց  
անշահագիտական ցանկությունները կինո-արտադրությանը  
ոգտակար լինելու: Նրանք չիմանալով կինո աշխատանքնե-  
րին մասնակցելու այլ հնարավորությունների մասին, իրն-  
գրում են տալ իրենց գերեր, կամ հնարավորություն նկար-  
ներում մասնակցելու: Սակայն Հայկինոն սահմանափակված  
լինելով իր արտադրական հնարավորություններով, չի կո-  
րող բավարարել բոլոր ցանկացողների այդ պահանջները:

Բոլորին մասնակից զարձնել նկարներում չի կարելի,  
ինչպես և չի կարելի անուշադրության մատնել նրանց ցան-  
կությունները: Անհրաժեշտ և մոտ պահել մեր յերիտասարդ  
արտադրության համար այդ կարենը տարրերը: Բացի գրա-

նից, անհրաժեշտ և նրանց աշխատանքը դնել վորս հունի մեջ։ Պետք է մատնանշել, վոր բացի զուտ արտադրական խնդիրներից, հայկինոյի առաջ դրված են այլ բնույթի բաղմաթիվ խնդիրներ՝ կուրտուրական կինոյի ստեղծումը, հիմնական բիջնարի կազմակերպումը, չընթէ կինոների ցանցի տարածումը և քաղաքի, գյուղի ու բնակի և այլն կինոփիկացիայի բազմաթիվ խնդիրներ։ Այդ բոլոր աշխատանքների համար կարելի յի և անհրաժեշտ և ոգտագործել վարպես նախաձեռնուզներ և կազմակերպիչներ այն յերիասարդ ուժերը, գորոնք ոմբակում են մեզ իրենց բաղմաթիվ գիմումներով։

Ի՞նչ կազմակերպչական ձև պետք է ընդունեն այդ բոլոր աշխատանքները։ Այդ ձեզ արգեն գոյություն ունի և մեծ հաջողությամբ կիրառվում է ԽՍՀՄ-ի սահմաններում։ Դա խորհրդային կինո բարեկամների ընկերությունն է—«Խորկիբ» (Օ. Ջ. Շ. Կ.)։

«Խորկիբ»-ի նպատակների և նրան առաջադրված խընդիրների մասին ընթերցողներին պարզ գաղափար տալու համար, բերում ենք «Խորկիբ»-ի կանոնագրությունից հետեւալ քաղվածքը։

1. «Խորկիբ»-ը նպատակ ունի միացնել աշխատավորությունը մի կազմակերպության մեջ, վարն ունի հետեւալ նպատակը։

ա) Ամեն կերպ աջակցել խորհրդային կինոյի շինարարությանը մի կազմակերպության մեջ, վարն ունի հետեւալ նպատակը։

բ) Ամեն կերպ աջակցել խորհրդային կինոյի շինարարությանը մանը բուրժուական իզենտոպիայի ակնհայտ կամ քողարկված ձևով ներս սովորելու գեմ։

գ) Մատեցնել կինո բանվորական կամ գյուղացիական մասսաներին։

2. Այդ նպատակների իրականացման համար «Խորկիբ»-ն առաջարկում է իրեն հետեւալ գործնական խնդիրները։

ա) Ծանոթացնել աշխատավորական մասսաներին կինոյի գերի ու նշանակության և նրա առաջ դրված խնդիրներին Խորհրդային Միության մեջ՝ զեկուցումներ, գասահանդեսներ, ցուցահանդեսներ ու համագուստություններ, գրադարաններ և կինո գրականություն, պլականներ և այլն տարածելու միջոցով։

բ) Ծանոթացնել մասսաներին կինո-տեխնիկայի, կինոարտգության և խորհրդային կինո-շինարարության հետ, նույնպես և ուսումնակրել մասսաների վերաբերմունքը (Փիլմայի քննադատական վերլուծումը գյուղում, Փարբիկաներում, գործարաններում, և կարմիր բանակայինների մեջ)։

շ) Կինո-արդյունաբերության զարգացման ակտիվ մասնակցությունը։

դ) Աջակցել մշտական և չընթէ կինոների ցանցի տարածմանը բանվորների և գյուղացիական մասսաների հաղպացների և կարմիր բանակի ու զորամասերի համար։

յ) Աջակցել կինոյին վերաբերվող բոլոր գիտական վորոնումներին։

շ) Աջակցել գիտական և կրթական կինեմատոգրաֆի առեղծմանը։

չ) «Խորկիբ»-ն ոգտվում է հետեւալ իրավունքներով։

ա) Կազմակերպել խորհրդային կինեմատոգրաֆիային նվիրված գասահանդեսներ, նկարների ցուցանիվում, ցուցահանդեսներ և համագումարներ, նույնպես և կազմակերպել ժողովներ՝ ցուցադրված նկարների կողմէկտիվ-քննադատական մշտիման նպատակով։

- բ) Հրատարակել կինո-խնդիրների վերաբերյալ լրագրություն :
- գ) Կազմակերպել մրցանակներ, ինչպես ԽՍՀՄ-ի գոյ-մաններին համապատասխանող կինո-տեխնիքական բարելավումների, կանոնադրուկցիաների մշտկուն նույնպես և կինո-սցենարիաների համար» :
- Այսպիսով նրանք, ովքեր ցանկանում են ոպտակար լինել Խորհրդային կինոյին, պետք է անդամագրվեն «Խորկիր»-ին կազմակերպեք ամենուրեք «Խորկիր»-ի բջիջներ :
- Ոժանդակեք խորհրդային կինոյի բարեկամներին կայ-մակերպվել ընկերության մեջ :
- Միահամուռ ուժերով պայքարենք լուրջուական ֆիրմաների դեմ :

Ա. ՄԱՐԱԹՅԱՆ



Հ. ԽԱՉԱՆՑԱՆԸ - ԲԱԴԱԼԻ ԴԵՐՈՒՄ («ՆԱՄՈՒՄ»)

## ԻՆՉՈՒՄՆ Ե «ՆԱՄՈՒՍ»-Ի ՀԱՅՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Կինո-շուկայում մեր ձեռք բերած նվաճումները քննելով, և ընդգծելով այն չափանիված հաջողությունը, վորեն արժանացել ե մեր առաջին նկարը՝ «Նամուս»-ը, պետք ե մի հարց պարզենք՝ ինչո՞ւմն է «Նամուս»-ի հաջողությունը։

Մեր անդրանիկի հաղթական յերթն ապացուցեց, վոր ժամանակ ե վերջնականապես հրաժարվել այն տրադիցիոն մեշանական հայացքներից «իլլյուզիոնի» նկատմամբ, ըստ վորի վերջինս լոկ ուրախ ժամանցի, ազատ ժամանակը լեցնելու և զվարճալիքի վայր ե, այլ ակնհայտի կերպով համոզվել, վոր անթույլատրելի յէ ստեղծել անգաղափար, ապոլիտիկ, արդիականությանը չհամապատասխանող նկարներ։

«Նամուս»-ը իսկական հեղափոխական Փիլմ ե, պլոտեալաբական իզեռլուզիֆայով շաղազված։ Հեղափոխությունն արտահայտվում ե վոչ միայն ակտովի ընդհարումների, ժառանակի ազրեսովի ձգտումների մեջ, այլ և նրանում, վոր անցյալն արտացոլվում է հեղափոխական իրականության մեջ ապրող ժամանակակից մարդու պրիզմայի միջոցով։ Վորը լուսավորում ե անցյալի գիտերը այսորվա մարդու տեսակետից, և այդ կողմից «Նամուս»-ը ցույց է տալիս 60-ական թվականների կենցաղն ու արագիցիաները՝ վոչ թե ազգագրական, այլ ցաւյց տվաղի դեպի ցույց արվողն ունեցած վերաբերմունքի տեսակետով։ Այսուղ ձեն այն գերն ե կատա-

բուժ, վոր գետակները գումարվելով մի ընդհանուր հարմոնիայի մեջ չեն բացարփում լոկ վորտես նկար (սինթետիկ մոնուածի սկզբունք) :

Մեկնարանության այդ մեթոդը թելագրեց ինձ ցույց տալ կենցաղը յերգիծանքի տեսակետով, այսինքն, այն զգացումների, վոր առաջ են գալիս մեր մեջ այս կամ այն տրադիցիայի դրդմամբ : Մի եպիզոդ—դպրոց և ուսուցիչ, տեսարանը կարելի յե ցույց տալ հանդիսականին և ասել, վոր դասավանդման այդ մեթոդը ճիշտ է : Դա կինը վոչ թե հեղափոխական իրականության ժամանակակից ժարդու հայացք, այլ ՅՈ—ական թվականների քաղքենու տեսակետ :

«Նամուռ»—ը մի բողոք և Հին Փանատիկ և անցուծ Հայաստանի դեմ» :      «Ալին թերը» Գեխտ

Ինչ գիտե հանդիսականն Արեւելքի մասին : Ռաջա, ողալիսկա, Զելիմ—խան, զալյան, չաղրա, մուսկուս և զափրան—ահա Արեւելքը :

Շուկայի հետաքրքրությունը զեղի խական անզանույն, իրական, աղքատ Արեւելքը—ահադին եր և չաղրայի զաղտնիքը բոլորին հուզում եր և հետաքրքրում :

«Նամուռ»—ի մեջ կյանքը ցույց և արված մասը սեալիզմի պլանով, այնուեղ չկան աղքատների խրախանճներ, նարեկոտի արբեցում, այլ կա մարդկային պայքար... Իսկ վորքո՞ն փորձեր յեղան պոկել արեւելյան կնոջ յերեսից չաղրան և ցույց տալ նրան իր անպահույն, զորչ առողյայի և այդ սոցիալական ակտուալ մոմենտը «Նամուռ»—ի մեջ խիստ ընդգծած է :

Անկամ, պասսիվ, ամեն ինչին զիմացոյ հայ աղջիկը, վորին շատ անկեղծորեն մարմնացրել և Շահուրաթյանը, քնքույշ Սուսանի պատկերը, զբոհորում և վոչ թե Սուսանի, այլ հայուհու կերպարանքը :

Արեւելյան կնոջ դրությունը ցուցահանված և ձչպրիագծերով—ահա հաջողության յերկրորդ պատճառը :

Յերբորդ պատճառը—Եթիվանզագելի վեպի սեժիսյուրական մեկնարանությունն է :

«Եամուռ»—ը սոցիալապես ակտուալ և վոչ միայն իր սյուժեատով, այլ և սեժիսյորդի մոռեցման պատճառով» :

ԽԵՐՍՈՆՍԿԻՑ «Կինո—ֆրոնտ»

Հորբորդ պատճառը՝ նկարի ագիտացիոն լինելն է .—

«Դեռ մնացել են վայրեր, ուր թագավորում և հինք : «Նամուռ» Փիլմը հինը խարազանող ազգու միջոցներից մեկն է» :

«Նաշա գաղետուա» . ԿՈՒԴՐԻՒՆ

Խորհրդային վո՞րքան Փիլմաներ սովեցին բանալ չաղրայի զաղտնիքը, բայց հետեւանքը յեղավ—կեղծ պաթոս և հարեմներ :

«Նամուռ»—ը նորից բարձրացրեց շագրայի մի ծայրը և նրանից թարմության հոտ և բուրում :

ԽԵՐՍՈՆՍԿԻՑ

Հինգերորդ պատճառն և—նկարի գեղարվեստական ձեռվակներում և առանձին կտորների իմպրեսիոնիստական խաղը : Բնույթագրի գրսեվորումը վորեւ մեկ զծով, վոր բնորոշում և այս կոմ այն տիպը, ավելի ուժեղ ազգեցություն ունի, քան թե նատուրալիզացիայի յենթարկված ընդհանուր պլանը :

Կտորների կարձատի խաղը՝ սոցիալական զաղափարը դուրս բերելու, տիպածը ցուցագրելու մոռեցման այդ տեսակի մեթոդը, ուժեղացնում և նկարը, աղավորում և ազգագրական նյութը :

Երա մեջ կենցաղական ժոմենուր ձուլվում և սյուժեյի  
Հետ և զեղարվեստական այդ ձեւավորման մեջ և Հաջողու-  
թյան հինգերորդ պատճառը:

«Նամուս»-ը ցույց տվեց արևելյան կենցաղը յեր-  
դիմանքով, քմծիծաղով, դառնությամբ և կարեկցու-  
թյամբ: Ուստամբի հարսանիքը հիշեցնում և Զեխովի  
հարսանիքը»:

### ԽԵԲՍՈՒԱԿԻՑ

Դեղարվեստական ստեղծագործությունը Մոսկվան դա-  
տում ե նրա մեջ պարունակվող գաղափարների և զեղար-  
վեստական ձեւավորման տեսակետից, վորի հետևանքով  
«Նամուս»-ը ստացել է ամբողջ Միության մեջ ընդհանուր  
մանաշում:

### ՀԱՅՈ ԲԵԿ-ՆՈԶԱՐՑԱՅ,

## «ԶԱՐԵ»

(Արտադրություն Հայկին Ակց. Ընկ.)

Ինչպես յուրաքանչյուր արվեստ, նույնպես և յուրա-  
քանչյուր Փիլմ արևմտյան Յելրուպայի և Ամերիկայի հրլ-  
փացած բուրժուայի համար արժեքավոր և այն չափով, վոր  
այն խոտանում ե նրա քիմքը, ինչ չափով նրան «եստիտիքա-  
կան» բավականություն և պատճառում, սակայն մասսան,  
մասնավանդ պրոլետարական մասսան, յուրաքանչյուր ստեղ-  
ծագործություն չափում և այն չափով, ինչ չափով վոր նու-  
կարողանում ե ներգործություն ունենալ իր վրա, կարողա-  
նում ե հարակցվել իր ներքին ապրումներին և արտահայտել  
իր զգացմունքները: Բուրժուան, ձգված իր ավտոմոբիլում,  
կինո յե գնում «ժամանակ սպանելու», իսկ պրոլետարական  
մասսան հերթի յե կանգնում կասուայի առաջ, վորպեսզի իր  
սեսանելիք «պատկերից» մի բան ուսանի: Բուրժուայի հա-  
մար միենույն է, թե ինչ ե կատարվում լուսարդելի վրա,  
ուստի նա պահանջնու չի, իսկ պրոլետարական մասսան  
շունչը զապած լուսարդելին և հետեւում, ուստի և նա պա-  
հանջնու ե :

Պարզ ե ուրեմն, ում քննազառությանն և, վոր պիտի  
դիմանա կինոն:

Ահա այսպիսի խիստ քննազատի առաջ և կանգնած խոր-  
հրդացին յուրաքանչյուր Փիլմ:

Վո՞ր չափով կարողանում ե խորհրդացին Փիլմը բավա-  
րարել այդ պահանջը:

Այս չարցին պատասխանելու համար քննենք Հայկինոյի նոր Փիլմը՝ «Զարե» նկարը:

Նախ և առաջ նյութը, վորովհետեւ նյութին այս կամ այն ձեռվ մոտենալուց եւ, վոր մեծ չափով արժեքավորվում է Փիլմը:

Մի քուրզ հովիվ և քուրզ աղջիկ սիրում են միմյանց: Սակայն բեկը մեկ անգամ տեսնում է աղջկան, հավանում է կամենում և իրեն կին առնել: Հովիվն աղջատ է ու խեղճ, բեկն հարուստ է և հզոր: Բեկը կաշառում է իշխանության, հովիվն բանտ են նստեցնում, իսկ ինքն իր արրանյակների միջոցով փախցնում է աղջկան: Բայց հովիվը փախչում է բանտից և սպանում բեկին: Մի չափազանց պարզ, չարևն նյութ, մի առանձնապես արժեք չներկայացնող յեռանկառնի՝ սիրահար, սիրուհի և հակառակորդ: Բայց տեսէք, թէ այդ պրիմիտիվ նյութը եկրանի վրա ինչպիսի ծավալում է սպանում:

Նախ այն, վոր նյութը վերցրած և քրդական կյանքից, մի ժողովրդի, վորն իր գարերի գոյության ընթացքում առաջին անգամ և վոչ միայն զեղարվեստի նյութ դառնում, այլ և առաջին անգամ և իր ամբողջական կյանքով մարդկության առաջ պատկերանում համաշխարհային մասշտաբով. (Վորովհետեւ կինոն ինքնին համաշխարհային է), մի ժողովրդի կյանքից, վորի մասին հասկացողություն շունի կուրտուրական աշխարհը:

Յեվ ահա յեռանկյունու փոկրիկ ինտրիկան զարդացրած և այնպես, արված և այնպիսի շրջանակների մեջ, վոր պատկերն ստեղծում է հակայական ազգազրական և սոցիալական բովանդակություն: Ակրնդիտի առաջ ասրածվում են քրդական սովորությունները, նրանց նիստ ու կացը, նախապաշտումները, ծեսերը, հագուստները, բնակարանները, գաշտ ու արտօները: Ակրնդիտը տեսնում է Հաստրակական

չերտերի վորանարաբերությունները, մի կողմից ինեղձությունն ու մյուս կողմից փարթամությունը, պետական իշխանության վերաբերմունքը, հոգենորականության և բեղեւրի շահատակությունները: Յեվ ինչպես ազգագրական նյութը չեշտելու նպատակը, նույնպես և դասակարգային իդեոլոգիան րվիսում են սցենարիայի ամբողջությունից և կոնստրուկցիայից և վաշ թե կապիտ կերպով ներս: Են խցկված, վորպես մի կարկատան: Դրանք կազմում են զեղարվեստական պատկերների անբաժան մասնիկը, յերբեք չեն աղաղակում իրենց մասին, այլ միաձուրված ամբողջ նկարին, հրապարակ են զալիս վորպես տրամարտական հետեւանք:

Անժիստելի յե իհարկե, վոր յուրաքանչյուր գեղարվեստական ստեղծագործություն վորոց գաղափար և հետապրնդում:

Վոր չափավ այդ զաղափարը գեղարվեստարեն և ալրվում, այն չափով շահում է ստեղծագործությունը: Այդ տեսակետից «Զարե» Փիլմը չափազանց շահված և, վորովհետեւ նա կարողացել է ազգազրական, սոցիալական և սիրային յերեք զատ-զատ նյութերն այնպես զեղարվեստարեն միաձուրել, վոր մեկը մյուսից զատել այլես հնարափոր չե, վոր մեկը առանց մյուսի անշուշտ կնումնանա:

Այս՝ «Զարե»-ի իրաշրջապույն առավելություններից մեկն է:

Մ ո ն տ ա ժ .—Ամենահաջող մշակված սցենարիան գեղի սպատկեր չե նա զես պետք ե կենդանություն ստանա: Կենդանությունը ավովը կենդանի և գինամիկ մոնտաժն է, վորն ստեղծում է բիտմ և ամբողջացնում կինո-պատկերը: Յուրաքանչյուր նկար հաջորդականորեն չե հանվում և այլ պլան-ներով: Յուրաքանչյուր պլանի ազգեցության ուժը կախված է նրա արտահայտիչ և ամբողջական լինելուց: Ամեն մի

պլան պետք ե հոգերանորեն և ըիսմիկորեն ամբողջացած,  
ինչպես և խաղի եմոցիոնալ մոմենտներն հետեղական և  
անընդիմող լինեն։ Պլանների մոնտաժը ևս, ուրեմն,  
պետք ե ունենա խիստ հետեղականություն և անընդիմո-

զականություն։ Հաջող մոնտաժից ե կախված պատկերի  
տեմպն ու բիոմը։ Մոնտաժն այնպես պիտի կատարվի, վոր  
շպարունակի ավելորդաբանություն և իճողվածություն։  
«Զարե»-ն այդ կողմից կարելի յէ համարել խիստ հաջող-  
ված։ Չկա վոչ մի կտոր, վորի վրայից ակրնտիսը անու-  
շաղբությամբ անցնի, վորն առնչված չլինի ընթացող գոր-  
ծողության հետ, ինչպես և չկա վորեկ պլան, վորը պատ-  
ճառաբանություն շատենա կամ գերասանի խաղը, պերզա-  
յի մի կտորը, յերկնքում լոզացող ամպերը չգրսեվորեն  
չոգերտնական ապրում, և կամ անարամարանական լինեն։

Սա ուժիայորի կարողության լավագույն ապացույցն է։

Գործող անձանց գիսպողիցիան, վոր նյութի ծավալումն  
և վորոշում, վորոչ և և ձիշու։ Յուրաքանչյուր գերակատա-  
րի ներքին աշխարհը բղխում է իր խաղից ու կատարած  
գործողությաններից։ Յեթե գործող անձը հոգեկան խռովք  
և ապրում, առա նա վոչ թէ նստած կամ կանզնած խորը  
հոգոց ե քաշում, այլ իր խոտվքն արտահայտում է վորեւ  
շարժումով, գործողությամբ։ Սա կինո խաղի կարորա-  
գույն կողմերից մեկն է։ «Զարե»-ում հաջողվել է այս կտ-  
որեոր մոմենտն ամբողջապես պահպանել։

Անցնելով առանձին գերակատարներին, պիտի ասել,  
վոր մեր գերասաններից մի քանիսը, ինչպես Հ. Ներսեսյանը,  
Հ. Խաչանյանը, Ն. Մանուչարյանը մասնակցելու այս յերկ-  
րորդ Փիլմում, ապացուցեցին, վոր լավ կինո-գերասաններ  
դառնալու տվյալներ ունեն։

Թագեռոսյան—Տենաղին նույնապես կինոյի համար պատ-



ԹԱԹԵՎՈՍՅԱՆ-ՏԵՆԱՂԻՆ—ԶԱՐԵՅԻ ԴԵՐՈՒՄ («ԶԱՐԵ»)

բառաված ուժ ե : Մյուսներն ես յուրաքանչյուրն իր գերամ կարողացել են վորոշ ախտ տալ :

Անցնելով լուսանկարներին, պետք ե չեշտել, վոր սպերատոր Յալովիյի լուսանկարները միանդամայն հաջող են, պարզ և վորոշ : Լուսանկարների հաջող լինելը Փիլմի հաջողության հիմնաքարերից մեկն ե :

Ամփոփելով վերը թված կողմերը, կարելի յէ անվերապահորեն պնդել, վոր Հայկինոյի յերկրորդ Փիլմը՝ «Զարե»-ն միանդամայն արդարացնում ե դեպի կինո-արդյունաբերության ունեցած նոր մոռեցման ուղիները, վոր նա գեղարվեստական մշակմամբ, սովորական ինտրիկայի չուրջ ստեղծել և հսկայական աղջակարական և սոցիալական նյութ, ամենայն հարազատությամբ տալով (առաջին անգամ գարերի պատմության ընթացքում) մեր հարեան քուրտ ժողովրդի կյանքը, սովորություններն ու դասակարգային չերտապոտմաները : Հայկինոյի սեժիայոր Հ. Բեկ-Նազարյանը (վորին պատկանում ե նաև այնարիան) «Զարե»-ի բեմադրությամբ ջախջախիչ հարված ե հասցնում Արևելքին մոտենալու «յելքոսպական» ոկզունքին, սպացուցելով իր հմտությունն ու վերջացած կինեմատոգրաֆիստ լինելը : Անտարակույս ե, վոր «Զարե» Փիլման խորհրդային Փիլմերի մեջ գրավելու յէ իր յեղակի տեղը :

Ա. ՏԵՐ-ՀՈՎՆԱԿՆՅԱՆ

## ՀԱՅԿԻՆՈՅԻ ԱՆԿԵՏԱՆ

ՀԱՅԿԻՆՈՅԻ ԸՆԿԵՏԻ

Հայկինոյի Վարչությանը ծավալելով իր արտադրության գործունեցությունը, վճռել և պարզել հասարակական կարծիքը իր կինո-նկարների արտադրության վարդաշման իդեոլոգիական ուղղությունը նկատմամբ։ Այս նպատակով Վարչությանն կինո-կամագանիան յէ սկսում մամուլի մեջ և կինո-արվեստի և կինո-արտադրության հիմնական խթնդիրները շոշափող մի շարք հողվածներ զետեղելուց հետո ձեռնարկում և գրականության և արվեստի աշխատավորների, ինչպես և իդեոլոգիական ֆրոնտի պատասխանառութեավարների շարքերում հասուկ մի անկետայի։

Բնավ չկամենալով հասուկ անկետային հարցերով սահմանափակել պատասխանները, Վարչությանն այնուամենայի ցանկության և հարաբեկ սահմանալ Զեր կարծիքը հետեւալ հիմնական ինդիրների մասին։

1. Մեր արտադրության ուղղությունը և մոռ ապագայում մշակելիք հիմնական թեմաները։

2. Մեր արտադրության բարգավաճման պայմանները և  
3. Զեր ընդհանուր ցանկությունները։

Թիւթիւ եջերում մեզ համարացող տեղի սկսությունը հաբերում և մեզ ինդիրել վորպեսզի Զեր աված պատասխանները ձեռակերպված լինեն ըստ կարելույն սեղմ։

Հուսալով վոր չեք հապաղի ուղարկել Զեր անկետան՝  
ընկերական վողջույններով։

Հայկինոյի Վարչության

## ԱՆԿԵՏԱՅԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ԲՆԿ. Հ. ԳՅՈՒՂՔՅՈՒՎՃԱՆ

(Պետական համալսարանի պրոռեկտոր)

Հայկինոյն—ինչպես և խորհրդային մյուս հանրապետությունների պետկինոները պետք և կամունիստական կուսակցության ընդհանուր զեկավարությամբ առավող իդեոլոգիական պայքարի, ինչպես նաև հետզհետեւ դիրքեր նվազող պրոլետարական կուլտուրայի կարևոր գործոններից մեկը հանդիսանանա։ Այսինքն՝ արգել և մոռավոր ապագայի գործունելության ընդհանուր ուղղությունն ու բովանդակությունը։ Կար ըմանակիները և խորհրդային լուծման հնարավորությունները, ինչպես նաև այդ գործունեյության հետադարձանների ընդհանուր պատկերն ու ընույթը։

Անցնենք կոնկրետ հարցերի յուսարանման։ Հայկինոյի սիստեմատիկ ու պլանաշանի աշխատանքներ ծավալելու խոչընը արգելատիթ կարող և լինել, նյութերի անհպատականարմար ընտրությունը։ Կյանքի վար արտահայտություններից, բնագավառներից Հայկինոն պետք և սյուժեները ընտրի իր մոռագա աշխատանքների համար։

Մեր կարծիքով Հայկինոյի ստեղծագործության բավանդակությունը առ այժմ հարկավոր և սահմանափակել հետեւալ յերեք կատեգորիայի ըրջանակների մեջ՝ 1) Մեր համահոկտեմբերյան հասարակության՝ բուրժուական, մանր բուրժուական (գյուղացիական և քաղքենիական) կյանքի այն տարրերը, վորոնք և խոչոր մողիքիկացիայի։

յենթարկված լինելով հանդերձ, տակալին իրենց ուժն ու ազգեցությունը նոր արտահայտությամբ պահպանում էնքեր հասարակակարգի մեջ ևս: 2) Հայրաստանի աշխատավորության՝ Դաշնակցության դեմ վարած հեղափոխական պայքարը: 3) Ծիլեր արձակող ու զարգացող նոր՝ հեղափոխական կենցաղի՝ հնի դեմ տարվող պայքարի բազմապիսի արտահայտությունները: Այս նյութերի սիստեմատիկ սպառությունը, հնարավորություն կտա Հայկինոյին մեր իդեոլոգիական պայքարի ու ազգեցության կովաններից մեկը դառնալ, գեղարվեստորեն քննադատելով ու անխնա մերկացնելով հետազիմականը, վնասակարն ու այլասերվածը և առջադրելով, ձևակերպելով ու լուծելով նորի ստեղծագործության խնդիրները:

Կինո-արտագրության բնադագառում գեղարվեստական ստեղծագործության վո՞ր հիմնական ուղղությամբ և հարկավոր դեկավարվել, ի՞նչ պրեմիներ ու մոտեցումներ և նպատակահարմար կիրառել: Աչա քննության յենթակա կենտրոնական հարցերից մեկը, վոր լուծման ձեն կը պայմանավորե կինո-ստեղծագործության հիմնական յեղանակը, նրա գողնաշարը:

Կինոն, իհարկե, վոչ զբականություն և, վոչ ել նկարչություն, և սիալ կլիներ անվերապահորեն պահանջել, վոր զբական կամ նկարչական մի վորեւ ուղղության պրինցիպներ կիրառվեն կինո-ստեղծագործության ոլոցեսում: Բայց այդ հանդամանքը չպեսք և խանգարի մեղ՝ յենելով ժարքսիստական աշխարհահայեցողության ընդհանուր պրինցիպներից ուրվադեկու կինո-ստեղծագործության ուղղության հիմնական բնույթը: Մեր կարծիքով կինոյի (ինչպես և պրուետքրականության) բնագավառում իրեւ ստեղծագործության տիբապետող և վորոշչ ուղղություն՝ ըետիզմը պիտի հանդիսանա: Կինո-ստեղծագործության պրո-

ցեսում ևս անհրաժեշտ ե խուսափել շինծու, կեղծ, անքնական, մողկիվացիայի յենթարկված գրություններ, ապրումներ և գործողություններ ցուցադրելուց, միտքը մթագնող և բովանդակությամբ անորոշ ու աղքատ՝ սիմվոլիկ և ալեբագորիկ պատկերավորումներից, բոմանափական շափազմնցություններից, գույների խտացումներից և հիվանդուսուրյական կամացիություններից: Անհրաժեշտ ե ասորյա կյանքի իրական պատկերը տարրերելով ու զատելով եյականը վոչ եյականից, կարեռը վոչ կարեռըից, ընդհանուրը ցուցադրելով մասնավորով, մասնավորը ընդհանուրով և ընավ չզիմել լուսանկարչական նատուրալիզմին կամ պահիսորդիստական իմպրեսիոնիզմին:

Բայց այդ բեկալիզմի միանգամայն անհանդուրժելի պիտի համարվի կինո-պատկերի ստեղծագործության առանցքը, ծանրության կենտրոնը գարձնել գերակշռող կենցագագրական կամ հոգեբանական տարրերի վերաբազրությանը, քանի վոր հոգեբանությունը կենցաղով և բնորոշվում, իսկ կենցաղը հոգեբանությամբ: Վո՞չ «կենցաղ» և վո՞չ ել «հոգեբանություն», այլ իրական կենցաղի գեղարվեստական վերաբանագրություն:

Մեր ներկա կյանքի ակնառու գինամիկան հասարակական բոլոր խավերի ակտիվացումը, նոր կենցաղի ստեղծագործության ուժեղ թափը, այդ կենցաղի ձևագործան, հաճախ Փիքացիայի յենթարկվող պրոցեսը, ինչպես զբական, այնպես ել կինո-ստեղծագործության առաջադրում են գժվար լուծելի խնդիրներ: Այդ պատճառով ել հարկավոր և աշալությ ուշագրություն գարձնել կինոյի ասոլարեզում ստեղծագործողների նախապատրաստման վրա: Սցենարիաներ կազմողների ու գրողների, կինո-ստեղծիսյորների գերը հետզհետե ավելի կարեւը պիտի դառնա: Առանց գեղարվեստական բնույնակությամբ ոժտված սցենարիաներ

գրողների և հեղափոխական ռեալիզմի պահանջները չժբառ-  
նող ուժիւրների, մեր կինոն չի կարող իր տուած դրած  
իրազը պարտականություններն անթերի կատարել։ Հար-  
կավոր և բոլոր միջոցներով գրականության նոր ժանրի սցե-  
նարիտական ստեղծագործության—արժեքը բարձրացնել,  
դարձացումը խրախուսել և հեղափոխական արվեստի ակ-  
տուալ խնդիրներն ըմբռնող ուժիւրների կազր պատրաս-  
տել իր մուսագա անելիքներն իրազործելու համար։

Հայկինոն պետք է հետզհետե ծավալի իր արագրու-  
թյունը, այժմյանից արդեն կազմելով աշխատանքների ընդ-  
հանուր պլանը։ Բայց կարո՞զ և արդյոք մեր կինոն ընդլայ-  
նել իր աշխատանքների սահմանները այն սուզ նյութական  
միջոցներով, վոր նրա տրամադրության տակ և իհարկե,  
վո՞չ մի գեղքաւում։ Մեր կինոն պետք է ավելի խոչսր նյու-  
թական ըհսուրաներ ունենա։ Մենք կարծում ենք, վոր աշ-  
քի առած ունենալով գործի կարեսությունը, նրա կասա-  
րած և կատարելիք դերը մեր ընդհանուր շինարարության  
մեջ՝ մեր պետական սրգաններն անպայման կընդառաջն  
Հայկինոյի ցանկություններին, բոլոր հնար յեղած միջոց-  
ներով ուժեղացնել նրան նյութապես։

### ԲԵԿ. Կ. ԴԱԶԱՐՅԱՆ

(Քաղլուսպլազմարի նախագահ)

Հարգելի՝ ընկերներ,

Ժամանակակից կինո-արտադրության ուղին թորհրդա-  
յին Միության մեջ ընթանում և վորոշ շեղումներով։ Այդ  
շեղումների հիմնական պատճառներն են—1) կինո-ար-

տադրությունների կտրվածությունը այն մասսայից, վորի հա-  
մար աբտագլում են և 2) շահագիտական, «անտեսավարա-  
կան» կազմի մեծ առավելությունը գեղարվեստականի—մա-  
սայացականի նկատմամբ։

Կինո-Փիլմի հաջողությունը և մեծ ընդունելությունը  
կախված է զիազդ հասարակության վերաբերմունքից։ Այդ  
ահապեկետից անհրաժեշտ ե կազ ստեղծել մասսայի հետ,  
ձռւում կինո-Փիլմի և մասսայի միջնորդ։ Կինո-ուժիխասյա-  
րը պիտի բազ ըմբռնի ու ուսումնասիրի իր մասսայի ընդու-  
նեկությունները և ցանկությունները։ Պետք և թուրացնել  
պին կազր, վորը մինչեւ հիմա յեղել և կինո-արտադրու-  
թյան և քաղաքային մանր բուրժուական տարրերի մեջ։  
Լավագույն գեղքաւում թողնելով այդ կազը՝ միաժամանակ  
առավելություն տալ բանվորա-պյուղացիական լայն մասսա-  
ներին և չշահագործել ու կուլտի ըմբրածել «անտեսավա-  
րական» արտահայտությունները և նրան կիրառումը։

Հայրաստանի կինո-արտադրությունը դեռ նոր և սկսվում,  
այդ պատճառով կարիք և զգում նյութական և թե հասարա-  
կական լայն շերտերի և կազմակերպությունների աջակցու-  
թյան։ Պետք և կազ ստեղծել, լայն աղիտացիա տանել հե-  
տաքրքրեցնելու մասսաներին գեղարվեստի այլ մի կող-  
մակը՝ կինոյով։

Բայց կարեւորն և նյութական լայն աշակցությունը  
կիմոյի արտադրության, տանց վորի յուրաքանչյուր ձեռ-  
նարկություն չի կարող պարզանալ։

Մեր ցանկությունը կարող է լինել՝ կինո թեմայի այն-  
պիսի ընտրություն, վոր բավարարի լայն շերտերին և վոչ  
թե քաղաքային մանր-բուրժուազիային։ Անհրաժեշտ  
ըանվարությանը և գլուղացիությանը հետաքրքրող և նրանց  
կյանքից վեցրած թեմաներ։ Գյուղն իրեն համապատաս-

իսան կինո-Փիլմ ե պահանջում, այդ պահանջին պիտի ընդառաջի Հայկինոն:

Մեր կարծիքով հետևյալ նկարը պիտի դարձնել Հայաստանի խորհրդայնացման—հեղափոխական շարժումը՝ մայիսի 1-ի և Հոկտեմբերյան դեպքերը։ Դա նշանակության կունենան նաև պատմական յերեսութիւն արձանագրության տեսակետից։ Հարկավոր ե մասսայականացնել այն նշանակությունը և իդեան, վորի կիրառովը յեղան խորհրդայնացման անցքերը։ Մեր հասարակությունը չպիտի մոռանա այդ փառավոր անցյալը։

### ԲԵԿ. Լ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

(Հ. Լ. Կ. Յ. Մ. ԿԵՆՈՒԿՈՒՄԻ քարտուզար)

Հարգելի ընկերներ,

Քանի վոր խորհրդային կինոն հանդիսանում է բանվորագյուղացիական մասսաների և մասնավորապես յերիտասարդության կոմունիստական գաստիբարակության գործոններից մեկը, անհրաժեշտ և, վոր Հայկինոն զեկավարվելով այդ սկզբունքով, կարողանա գործնականում կիրառել վերահիշյալ գրությունը։

Մեր անցյալի միշտ վերլուծումը Զեր արտադրվող Փիլմաների միջոցով ունի խոշոր դաստիարակչական բնույթ։ Կենդանի կերպով եկրանի վրա հանդես րերելով ցարական ու գանակցական կառավարությունների վողջ գործելակերպը, գրանուլ հնարավոր կիմնի այն յերիտասարդությանը, վորը չի ասլիել անցյալում, տալ բավականաշտափ հարուստ նյութ։ Անցյալում մեզ մոտ տեղի ունեցած հեղափոխական շրջանների հայտնաբերումը ևս Հոկտյանին։



Ն. ՄԱՆՈՒՋԱՐՅԱՆ—ՆԱԽՈՑԻ ԴԵՐՈՒՄ («ԶԱՐԵ»)

գեր կիսազա այդ գործում (20 թվի մայիս 1-ը, Հայաստանի խորհրդայնացումը և այլն) :

Անհրաժեշտ են նաև չեղտել, վոր կոմյերիտական և պիոներական ֆիլմաների արտադրումը ևս պետք են զբաղեցնի Հայկինոյին։ Ներկայիս կերպով նոր կյանքը, յերետասարդության մասնակցությունը մեր յերկրի սոցիալստական շինարարությանը, նոր կենցաղի սալմնավորումը և այդ շրջանի առանձին հետաքրքիր մոմենտները իր բոլոր հաջողություններով և բաց կողմերով պետք են ամփոփվի և արտադրովի մեր եկանի վրա։ Այդ բոլոր խնդիրները այժմեյական են և պահանջում են պարզաբանում։ Սրանով են, վոր Հայկինոն կկարողանա արդարացնել իր վրա դրված պարտականությունները։

### ԲԵԿ. Յ. ԽԱՆՉԱԴՅԱՆ

(Գրականագետ)

Հայկինոն պետք են պատկերացնի վոչ միայն Հայկյանքը, այլև Հայաստանի ժողովուրդների կյանքը՝ անցյալում թե ներկայումս։ Հայ կինո-սեղծագործության հիմնական աղբյուրը բնականաբար, պետք են լինի Հայոց գրականությունը։ Հին ու նոր կենցաղը, հեղափոխությունն ու պրոլետարական իդեոլոգիան, պետք են նույնպես արտաշայտվեն կինո-նկարների մեջ։

Ինչ վերաբերում են Հայկինոյի բոնած ուղին, յև կարծում եմ, վոր նոր գործի համար բնական և անխուսափելի թերություններով հանդերձ «Նամոււ»-ի և «Զարե»-ի փորձը միանգամայն բավարար պետք են համարել և խրախուսիչ, այդ նկարները կինո-չուկայում անպայման թարմ և հետաքրքրական յերեսութներ են։

«Նամուս»-ն ու «Զարե»-ն անցյալն են պատկերացնում։ Յանկալի յէ, վոր ժամանակակից կյանքի վերաբառազբությունը ևս արդիք։ Մի գործ, վորի գժվարությունները, ինարկե, չեշտ հաղթահարելի չեն։

Մրտանց վաղջւնում եմ Հայկինոյի նախաձեռնությունը կամիքականի բնմադրության ասպարիզում։

Ծիծաղը խարազանող և խարանող, ծիծաղը հեղափոխիչ (ծիծաղի հանձնարեղ վարպետ Ալեքսանդր Հերցենի առելով, Վոլտերի ծիծաղն ավելի յէ Կործանել, քան Ռուսասիրացը), ծիծաղը զվարձացնող, զվարթացնող, բոլորին կենական պահանջն ե։ Տվե՛ք այդ ծիծաղը։

Յեթե «Շոր ու Շորչոր»-ը հաջողիք, դա գեղեցիկ սկզբնավորություն կլինի կինո-կոմեդիաների շարքի, վարսանց վրա իմ համորմունքով—Հայկինոն պետք և ամենուուրջ ուշադրությունը դարձնի։

Սակայն... մի կարեսը վերապահության։

Զողետք և մոռանալ, վոր կինո-սեֆիսայուները յիրքիմն գնում են նվազագույն զիմադրության գծով, առաջնորդվում ծիծաղը ծիծաղի համար սկզբունքավ։ Ծիծաղն ու կառակին եր պետք և ունենան իրենց վորուչ հիմքն ու նալապակը։

## Ա. ԲՈՒՐՉԱԼՅԱՆ

(ԳԼՈՒԹԱՐՈՆԻ ՈԵԺԻՍՈՅՈՐ)

Հարգելի՝ ընկերներ,

Անկետայի հարցերին պատասխանելու համար, անհրաժեշտ և նախ և առաջ հիմնավոր ծանոթություն այնպիսի բարդ գեղարվեստական արդյունարերության հետ, վորպիսն

և կինո-գործարանը։ Միայն այդ գեղարվում թերեւ հաջողվեր վորեւ ոգտակար լան առաջարկել։ Բայց վորովհետեւ յես ինձ այլպիսի մասնագետ չեմ համարում, ապա չափից դուքս անհարմար եմ գրում ինձ, յերբ հարկադրված եմ այդ հարցերին պատասխանել։ Բայց յեթե զա անհրաժեշտ և, պատասխանում եմ, բնակ հավակնություն չանենալով կուլումբոսի անուն վատակել։ Առաջին հարցին, թե վորոնք ին մեր արտադրության ուղիները, կողատասխանեմ, վոր այդ խնդրի լուծումը զանվառ և ինքնուրույն վաճի, ինքնուրույն նույթերի և կարող եմ նույնիսկ ասել, սեփական տեխնիքական միջոցների մեջ։ Ինչքան եւ հաջող կարողանանք մարմնացնել եկանի վրա այլ ժողովրդի նույթերն ու կենցաղը, զա այնուամենայնիվ կլինի միմիայն լավ ոճիսացիա։

Կարելի յէ ցուցահանել բոլոր մանրամասնությունները —բայց հյուսիսային մատախուզի բիտմը ցուցահանել մենք չենք կարող, ինչպես վոր նրանք չեն կարող մեր արևի ճառապայլթներսից նկատմանը մեր ցեղի բիտմը ցուցահանել։

Դա՝ նախ և առաջ զործնական եւ չեր լինի, այն պատճառով թեկուզ, վոր այն արտադրությունը, վոր կգտնի իր վոճան ու տեխնիկան, միշտ կլինի յուրատեսակ և ինքնուրույն, նույնիսկ վորպից եւ անկախ, իսկ այդ արգեն յերկու պլյուս և, վորոնցից հրաժարվելու հաղել թե զործնական լինի։

Յերկրորդ հարցը՝ արտադրության ուժեղացման մասին ե։ Դրա ուժեղացման պայմաններն են նախ և առաջ իսպը, վորը և փողը։ Կարելի յէ սահմանափակվել վոքք մասշտաբի զործարանով, լույս ընծայվազ նկարների վոքք չանեկով—առակայն ամեն ինչ պետք և կահավորված լինի համաձայն տեխնիկայի վերջին խոսքի։

Այսու մի առաջնագործություն խոշոր վիաս կհանցնի

վոչ միայն գործի գեղարվեստական կողմին, այլ և նյութականին։ Վորեւ մի պրոժեկտորի բացակայությունն ահազին ժամանակ է խլում ուժիսայորից, մինչև վոր նա կը կարողանա կարգավորել լույսը, վորն անհրաժեշտ է նրան վորեւ մոմենտի համար։ Իսկ զա յերկարացնում է աշխատանքը, վորին յերեմն մասնակից են ահազին թվով և թանգ նստող մարդիկ և միաժամանակ չի հասցնում ցանկալի եփփեկտիվ։

Յերրորդ հարցն ե—ընդհանուր ցանկություններ։ Յեթև դեկալարները հետագայումն ել նվիրված լինեն գործին նույն սիրով և յեռանդով, ինչպես մենք այդ տեսել ենք «Նամուս»-ի և «Զարե»-ի լուսանկարումների ժամանակ, ապա դործի հաջողության համար կարելի յե հանդիսութինել։

### ԲԵԿ. Լ. ՔԱՂԱԿԱՆԹԱՐ

(Պետթատրոնի ուժիսայոր)

«Նամուս»-ի և «Զարե»-ի արտաքին շուկայում գտած հաջողությունը կարծես թե թելագրում է, վոր մեր կինոարտադրության ուղին ճիշտ է բոնված։ Սակայն, կարծում եմ, վոր այդպիսի յեղակացությունը մակերեսային կլինի։ Բանն այն է, վոր այն ինչ այդ յերկու ֆիլմը՝ արտաքին շուկայում (գլխավորապես Մոսկվայում իհարկե) խոչոր ընդունելություն են գտել, չայաստանում և Անդրկովկասում նրանց հաջողությունը ակնհայտնի կերպով շատ ավելի նվազ եր։ Յեկ զա հասկանալի յե։ Մոսկվայի համար «Նամուս»-ն ու «Զարե»-ն գրեթե անձանոթ և եկզոտիկ կենցաղի պատկերացում եյին և կինո-սյուժետների մոնուան միանմանությունից հոգնած հանդիսականը ագահորեն հար-

ձակվեց արեւելյան այդ կերակուրի վրա։ Այս մի կողմից Մյուս կողմից՝ այստեղ գեր ե խաղացել զուտ հոգեբանական մի հանդամանք։ Ռուսաստանում վոչ միայն լայն հասրակությունը, այլ և շատ հաճախ գրական շրջանները բավականին ազատ գաղափար ունեն մեր մասին և նրանց մտապատճերում մենք շատ քիչ տարբերություն ունենք բաշկիրներից կամ կիրգիզներից։ Հոգեբանական այդ ապարացեպցիան շատ բարեհաջող հանդամանք հանդիսացավ, յերբ հանկարծ, հանդես յեկալ Հայկինոն իր Փիլմերով, վորոնք ըստամենայնի նման եյին իր, Մոսկվայի կամ արտասահմանի Փիլմաների։ Այսինքն պատահեց նույնը, ինչ կպատահեր մեզ հետ, յեթե հանկարծ յեղիների մեջ հանդես գար ասենք թե Ռաֆֆու պես մի վիպագիր, կամ ասենք թե մեր Պետական թատրոնի պես մի թատրոն։ Մովասածը շատ քիչ է, արդյունքը միանգամայն բավարար։ Հոգեբանական եֆֆեկտը՝ բնականաբար ուժեղ։

Դրանով ե բացատրվում Մոսկվայի քննադատության հույժ բարյացակամ վերաբերմունքը։

Այստեղ մեր արտադրությունը կանգնած է խոշոր մի պրոբլեմի առաջ։ Սեփական շուկան աղքատ և և ծածկել մեր արտադրությունը չի կարող, այն ինչ սեփական և արտադրությունների պահանջները կարծես թե աարեւեր են։ Առ այնին քայլերին մեր արտադրության կուրսը արտաքին շուկայի ուղղությամբ է։ Պետք ե այսպես շարունակել։ Կարծում եմ՝ վոչ կինոն, ինչպես ունեն մի արփեստ, և թերևս ավելի քան վորեւ արվեստ-հոգրագույն մի միջոց և մասսայի գիտակացությունը ու հոգեբանությունը կազմակերպելու համար։ Յեկ իհարկ է, մեր անելիքն և՝ մեր մասսայի դիտակացությունն ու հոգեբանությունը կազմակերպելը։ «Նամուս»-ով, «Զարե»-ով, «Եորշորով» այդ ուղղությամբ շատ բան չես անի։ Ուրեմն հարկափոր են այլ մոտեցումներ և աշխատանքիւ

մեթողներ, վորանց բեցեալար վոչ վոք այս բոպեյիս չունի, բայց այդ ժոտեցումներն ու մեթողները մշակելու աշխատանքն ե, վոր պիտի կազմի հիմնարարը մեր հետագա աշխատանքների:

Խոդիրը դժվարանում է նրանով, վոր ինչպես ասացինք, մեր սեփական շուկան բավարար չե և հարկ կա համաձայնեցնել տարրեր շուկաների տարրեր պահանջները, համաձայնեցնել չենց արտադրության ձեռքի մեջ: Դրա միջոցներից մեկն այն է, վոր պետք է ձգտել, վորպեսզի արտաքին շուկայում մեր հաջողությունները շահմանափակին միմիայն այս հաջողությամբ, այլ ըստամենայնի լինեն նաև զուտ կինոմասողքափային հաջողությաններ: Այդ ձեռք բերելու համար անհրաժեշտ է նախ և առաջ տեխնիկապես կատարել առողջապահ լինել: «Յոլա տանելու» վիճակից պետք է աղատակրվել և մի կողմից պետք է մեր կինո-հելարաւմների, դորարարաւորիայի տեխնիկան հավասարեցնել յեկրտական տեխնիկայի, մյուս կողմից՝ համարատասան պայմաններ ստեղծել առաջ բերելու համար հմտությունարիաստերի, կինո-ռեժիսորների, կինո-դերակատարների կադրեր:

Այդ բորբը համար հարկավոր էն նախ և առաջ նյութական միջոցներ, այն ել խոչըն միջոցներ: Գեկավար ըրջաններն այդ պետք է ըմբռնեն, այլպես մեր կինո-արտադրությունը չժաղկած կխամրի:

#### ԲԵԿ. Ա. ՄԱՆՎԵԼՅԱՆ

(Հ. Խ. Ա. Հ. վաստակավոր գերասան և գրագանագետ)

Հարգելի! ընկերներ,

Իդեոլոգիայի հարցը թողնելով պատասխանառու դե-

կավար ընկերներին, յես պետք է ասեմ, վոր իմ կարծիքով Հայկինոն մինչեւ այսոր իր աշխատանքները տարել ե ուղիղ գծով:

Ես իր յերկու նկարներով ապացուցեց, վոր կանոնած և ուղիղ ձահաղարձի վրա: Յես կցանկանայի, վոր նա շարունակեր, առաջ խացած կոլորիս նկարներ, վորսեզ ցայտուն կերպով չեւսպած լինի Արեւելքը: Դրա հմտար պետք է ոզագործել մեր թե չին և թե նոր գրականությունը, առաջին հերթին մեր այսորվա կենցաղը, լուսաբանելով նրա գրական երացաւությունը:

Հայկինոյի սուզ միջոցները, անշուշտ, պետք է ստիլեց Հայկինոյի վարչությանը սիստմունքների մեջ չընկելու համար մեծ զգուշությամբ վերաբերվել զեսպի ցուցակրվելիք նյութերը: Յես ուրախ եմ, վոր Հայկինոյի վարչությունը, զիստակցելով այդ, զմենել և մի շարք պատասխանառու ընկերների—գրականագետների և արվեստագետների, լսելու նրանց կարծիքները:

Ինձ թվում ե, վոր լավ կլիներ, յեթե Հայկինոյին կից լիներ մշտական մարմին, վորը զրադվեր նյութեր վորոնելով, ացնարիաներ կազմելու խնդրով:

#### ԲԵԿ. Ա. ՇԻՐՎԱՆՉՅԱՆ

(Գրականագետ—դրամատուրգ)

Հարգելի Վարչությանդ անկետային յերեք հարցերին կարսդ եմ պատասխանել միայն ընդհանուր գծերով, մահավանդ վոր ձեր ցանկությունն ե գրել հակիրճ:

Անտարակույս, առասարակ կինոյին և վիճակված մոտիկ աղադայում գրավել պատասխանառու տեղ արվեստների ասպարիզում:

Արմեստների մեջ այս կամ այն իդեոլոգիան այն ժամա-  
 նակ է միայն ազգեցիկ և կրթիչ, վոր լինելով իմաստալի  
 ժիշտույն ժամանակ և գեղեցիկ արտահայտված։ Բոնազբո-  
 սիկ կերպով հորինված և գեղարվեստորեն չըձեակերպված  
 իդեոլոգիան, վորքան ևս նա լինի իմաստալի, չի կարող հաս-  
 նել նպատակին։ Այստեղից ծագում ե մի խնդիր։ ո՞վքեր կա-  
 րող են ընտիր նյութ մատակարարել սինեմային։ Պատաս-  
 խանը մեկ և նրանք, վորոնց գեղարվեստական ճաշակի վո-  
 րոց կը փուն ապացուցված ե։ Սցենարիան նույնը սիտի լինի,  
 ինչ վոր վեպը, գրաման, պոեման, այսինքն պետք է կը ե իր  
 մեջ ստեղծագործված չունչ։ Նա նույնպես պետք է ունենա  
 ներդաշնակորեն իրարու հաջորդող սկիզբ, ընթացք, վախ-  
 ճան, այլ կերպ նա անհետաքրքրական է։ Նա ոկորից մինչեւ  
 վերջ սիտի լարված պահե դիտողի ուշադրությունն ու հե-  
 տաքրքրությունը, վորպես մի լավ կառուցված բեմական  
 յերկ։ Հատուկառ տեսարաններից կամ եպիզոդներից կազ-  
 մված կինեմային մի խայտարդետ չենք, գուցե կարող ե ըդ-  
 րաղեցնել դիտողի հայացքը, բայց յերբեք չի ադրիւ նրա  
 դզացմունքի վրա։ Տրյուկները վազուց ե, վոր Յեվրոպայում  
 դարձել են արհամարելի և այսոր քիչ թե շատ խոշոր լուրջ  
 սինեմային արհեստանոցները առանձին ուշադրություն են  
 դարձում նկարի բովանդակության վրա և այս պատճա-  
 ռով է, վոր նրանք շարունակ դիմում են գեղարվեստական  
 գրականությանը կամ գեղարվեստական հեղինակների ող-  
 ությանը, այս և պատճառը, վոր մինչդեռ տրյուկներից  
 բաղկացած մի նկար մի քանի վարկյան փայլելով, չքանիւմ  
 է, գեղարվեստական մի յերկ, վորպեսին և, որինակ վիկտոր  
 Շյուեգոյի «Թշվառները» նկարվում ե տասնյակ արհեստա-  
 նոցներում և ապրում ե տասնյակ տարիներ։



Հ. ԽԵՐՄԻՑՅԱՆ—ՌՈՍՏՈՆԻ ԴԵՐՈՒՄ («ՆԱՄՈՒՄ»)

## ԻՆՉ ԵՆ ԱՍՈՒՄ ՄԵՐ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

— «Այն բոլորը, ինչ յես տեսա «Նամուս»-ում, միանդամայն նոր և և որիդիմալ։ Նկարը սկզբից մինչև վերջ նայվում և հետաքրքրությամբ»։

Ամերիկական քղբակից

— «Նամուս» նկարն արժեքավոր և նրանով, վոր նա՝

1) Զուրկ և «պրետենդիալից, ըստ մտահղացման և ձեփակերպման»։

2) Կենսական և համոզեցուցիչ կերպով տալիս և կենցաղն ու չընալաւուր»։

ՈՐԻՒՆՍԿԻ

— «Ինչ հսկայական տարբերություն հնի և նորի մեջ։ «Նամուս»-ը գրավում է իր թարմությամբ, գեղեցկությամբ և ձմարտությամբ։ Լավ կլիներ, վոր այս Փիլմը ցուցադրուեր մեղանում՝ ձապոնիայում»։

Ճապոնիայի գլխավոր գեսպանի անձնական քարտուզար  
ՄԻԱԿԱՎԱ.

— «Նամուս»-ը սքանչելի Փիլմ է, ուր Արևելքը նկարագրվում է իր իսկական կերպարանքով։ Կյանքը, տիտերն ու կենցաղը զրուերված են առանց ձեւականությունների։ «Նամուս»-ի զիտումը խոշոր հաճույք պատճառեց մեզ»։

Թրքական գեսպանության ավագ քարտուզար՝ ԲԵԴԻ ԲԵՑ

— «Մեզ ցույց տվին բացարձակորեն հաջող կերպով հանված կինո-նկար : «Նամուս»-ի բեմադրովը ցույց տվեց , վոր լավ տեղյակ և մարդու հոգեբանությանը :

Սքանչելի տիպաժը , լավ կասկակցված սյուժեն նպաստում են «Նամուս»-ի հաջող ցուցադրմանը բոլոր յերկրներում » :

— «Խորհրդային Հայաստանի առաջին նկարը՝ «Նամուս»-ը վորպիս սկիզբ , շատ լավն է : Հայ ժողովուրդը շատ չորհալի յեւ և արտիստիկ : Նոր Փիլմեր ենք սպասում :

ԽՐԻՍՏՈՆՅԱՆ ԽԵՐՍՈՂՆԿԻ

— «Շոր և Շորչոր»-ը խորհրդային առաջին կոմիքսական Փիլմն է : «Շոր և Շորչոր»-ը «Պատ և Պատաշոն»-ի նոր վարիանտն է :

«Շոր և Շորչոր»-ը այնքան դինամիկ և և իրական , վոր հասարակությունը նրան տեսնելով չի կարող չծիծաղել » :

Ս. Վեն .

— «Շոր և Շորչոր» Փիլմայով Հայկինոն ապացուցեց , վոր նա բավականաչափ տվյալներ ունի թեթև և ծիծաղչարժ Փիլմա արտադրելու :

«Խ. Հ.»

— «Շոր և Շորչոր»-ի ցուցադրման առաջին որը կինոկոմեդիայի դժվարին ճակատում տարած մեր հաղթանակի որն ե» :

«Խ. Հ.» № 32

— «Շոր և Շորչոր»-ը դաստիարակչական և աղխոացիոն բնույթ և կրում , այդ բառի ամենալայն խմասով» :

«Խ. Հ.» № 34

## ԿԱՐԾԻՔՆԵՐ «ԶԱՐԵ»-ՑԻ ՄԱՍԻՆ

«Զարե»-ն հիանալի յեւ .

Փետրվարի սկզբներից Մոսկվայի «Մալայա Դմիտրովկա» և «Մրամունոյե» կինո-թատրոններում Հայկինոյի յերկրորդ արտադրությունը ցուցադրվում և ամբողջ որվարնթացքում , որական 8 սեանսով : Նկարի ցուցադրությանը նվազակցում և սիմֆոնիկ և ասիսական նվագախմբեր : Մեանսների ժամանակ միջանցքում և հստագայի վրա անիական և քրդական պարեր են լինում : Կինո-թատրոնները «Զարե»-յի ցուցադրության այս որերին լեփ-լեցուն են :

Սոսորի տալիս ենք «Զարե»-յի մասին յեղած մի քանի կարծիքներ , վարոնք բոլորը վկայում են Հայկինոյի նվաճումները կինո-թեմադրության ասպարիզում :

Բնկ . ԼԱԶՅԱՆ . (Մոսկվայի կուսկոմի մամուլի յենթարաժնի վարիչ) . — «Զարե»-ն հիանալի յեւ վոչ միայն նրանով , վոր կատարյալ ձատությամբ վերաբատադրում և իրականությունը , այլ և նրանով , վոր նա ծանոթացնում և մեզ քիչ ծանոթ ճնշված ժողովրդի կյանքին ու կենցաղին» :

Բնկ . Ն . ՖՈՐՄԱԳԵՐ . («Մեժրաբակոմ» ոռու կինոյի սեփականոր) . . . . . «Բնկ . Բեկ-Նազարյանը նկարին խոր կուլտուրական հշանակություն և տվել : Կանցնի մի քանի տարի և Անդրկովկասի բոլոր հետաքրքիր ու զեղատես նահապետական գծերն աստիճանաբար կմնոնեն նոր զաղափարների և նոր կենցաղի փոթորկալից ճնշման տակ :

Անգնահատելի յեւ այն մարդկանց ծառայությունը , վորոնք զեղարվեստական կերպարանքների մեջ պահպանում են անցած որերի բնորոշ գծերն ու վշտերը : Այդ պատճառով ամբողջ հոգով վողջունում եմ Հայկինոյի տագանդավոր Բեկ-Նազարյանին , գեղի առաջ արված նրանց հաղթական քայլի համար» :

Բնկ. ԲԵԿԵՑՈՎԱ. — (Գործարանի բանվորուհի) . . . Ել-  
կարը ինձ վրա խոշոր տպավորության գործեց թե գերասան-  
ների խաղի և թե նկարի բեմադրության տևսակետից : Պետք  
է, վոր բանվորները ծանոթանան այն ժողովրդի կյանքին,  
վորի մասին նրանք համարյա վոչինչ չգիտեն» :

Բնկ. Ք. ԲՈԼՏՅԱՆԵՍԿԻՅ. — (Խորհ. կինեմատոգրաֆիստ-  
յի վաստակավոր արտիստ) « . . . Ծեժիսյորը կարողացել է  
«Զարե»-յի մեջ ցույց տալ չափազանց հետաքրքրի և մեզ  
կատարելապես անծանոթ կիսավայրենի քուրզ ցեղերի  
կյանքը, սովորույթները և կենցաղը» :

ՌԵԺԻՍՈՅՅՈՐ ԿԱՅՅԱՆՈՎ. — « . . . Նկարի գլխավոր ար-  
ժանիքը նախ և առաջ մեզ ծանոթ Արեւելքի մի նոր և հե-  
տաքրքիր անկյունի ցուցադրումն է» :

Մ. ՎԵՆ. — « . . . Մինչեւ այժմ մենք տեսել ենք տոնական  
կովկասը Ողալիսելի անդուրեկան պարերով — կովկասը սա-  
լոն-վագոնի լուսամուտից : Բեկ-Նազարյանն արեւելյան նը-  
կարների առաջին ուժիսյորն է, վորը կարողացել է կիսո-  
ապարատի աչքին տեսանելի դարձնել իսկական կովկասը» :

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Խմբագրության կողմից .
2. Գ. Գօնունի—Գժվարին ուղիով .
3. Պ. Ֆոլյան—Կինո-րենո .
4. Ա. Մադարյան—Կինոֆիկացիայի ուղիները .
5. Հ. Բեկ-Նազարյան—Ինչո՞ւմն և «Նամուս»-ի հաջողու-  
թյունը .
6. Ա. Տեր-Հովհաննիան—«Զարե» .
7. Հայկինյի անկետան  
Փյուլի բյուվյան  
Կ. Ղազարյան  
Լ. Մարտիրոսյան  
Յ. Խանզադյան  
Ա. Բուրչալյան  
Լ. Քալանք-ար  
Մ. Մանվելյան  
Շիրվանզադե
8. Ի՞նչ են ասում մեր արտադրության մասին .
9. Հայտարարություններ .
10. Լուսանկարներ .  
Հ. Բեկ-Նազարյան  
Շահուբարյան-Տատիյեվա  
Հ. Խաչանյան  
Մ. Թադեվոսյան Տենազի  
Ն. Մանուչարյան  
Հ. Ներսիսյան

## 2. ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՅԵՎ ՏԵՍԱՐԱՆԱՅԻՆ ՆԿԱՐՆԵՐ

- ա) «Խորհրդային Հայաստան»—6 մասից  
✓բ) «Ընկա Ռիկովը Հայաստանում»—3 մասից  
գ) «Ընկա Մշատիկյանի քաղումը»—1 »  
դ) «Հեղեղը Յերևանում» 1 »  
յե) «Ցորենի կուլտուրան» 1 »  
զ) «Շիքրանցքի քացումը» 2 »  
ե) «Յերևանի հիգրոկայանի քացումը» 1 »  
ըշ) «Գաղթականների տեղավորումը  
      Դավիթում» 1 »  
ժ) «Լենինականի յերկրաշարժը» 1 »  
ի) «Ոնտոի գործարանի քացումը» 1 »

### ՄՈՏԱԳԱ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. «Անուշ»—ըստ Հ. Թումանյանի,  
      Բեժ. Ա. Բուրջալյան.
2. «Զար վողի»—ըստ Շիրվանզադեյի,  
      Բեժ. Հ. Բեկ-Նազարյան.
3. «Մի կարիլ մեղք»—ըստ Հ. Թումանյանի,  
      Բեժ. Հ. Բեկ-Նազարյան.
4. «Սուրբ Գևորգի դուլը»—ըստ Մանվելյանի,  
      Բեժ. Ա. Բուրջալյան.
5. «Քառո»—ըստ Շիրվանզադեյի.  
      Բեժ. Հ. Բեկ-Նազարյան.
6. «Զրահապատ Մուսայելյան»—1920 թ. Մայիսյան ապօս-  
      տամբությունը Հայաստանում),  
      Բեժ. Հ. Բեկ-Նազարյան.
7. «Սիոնի համապարփը»—(մալականների կյանքից),  
      Բեժ. Հ. Բեկ-Նազարյան.



ՀՀ Ազգային գրադարան



NL0300475

ԳԻՆՆ Ե 40 ԿՈՊ.

